

ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում

Տեսությունից իրականություն

ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործություններն ու ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումները Հայաստանում

Տեսությունից իրականություն

Նախաբան

Ատելության ու անհանդուրժողականության շարժառիթով պայմանավորված հանցագործություններն ու այլ իրավախախտումները ամենօրյա իրողություններ են հայաստանյան հասարակությունում:

ՓԻՆՔ Արմենիան վերջին տարիների ընթացքում գրանցել է բազմաթիվ բողոքներ անձանց իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության շարժառիթով պայմանավորված հանցագործությունների և այլ իրավախախտումների վերաբերյալ: Մինչդեռ հայտնի է, որ ատելությամբ պայմանավորված հանցագործությունները վտանգավոր են ոչ միայն քաղաքացիների իրավահավասարության խախտմամբ և տուժողի վրա ունեցած ազդեցությամբ, այլև տուժողի ներկայացրած համայնքի վրա ունեցած ազդեցությամբ և պետության անվտանգության խնդիրներով:

Վերջինս, իր հերթին, ոչ միայն խաթարում է ամբողջ հասարակության գործառնումը, այլ նաև հարցականի տակ է դնում հասարակության զարգացման ժողովրդավարական հեռանկարը և մարդու իրավունքների սկզբունքները:

Նպատակ ունենալով բացահայտելու ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների ընդհանուր պատկերը և բարձրացնելու ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական մարմինների, հասարակության ավելի լայն շերտերի իրազեկվածությունը ԼԳԲՏ անձանց դեմ իրականացվող ատելությամբ պայմանավորված բռնությունների դեպքերի, դրանց դրսևորումների և առանձնահատկությունների, ինչպես նաև իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմների հասանելիության կարևորության վերաբերյալ, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ-ն նախաձեռնել է սույն հրապարակումը:

Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ-ն հատուկ շնորհակալություն է հայտնում Իլգա Եվրոպային, ում ֆինանսական աջակցությամբ հնարավոր է դարձավ իրականացնել սույն հրապարակումը՝ «Կանխարգել և հասցեագրել Հայաստանում ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործությունները» ծրագրի շրջանակներում: Հատուկ շնորհակալություն Վահան Բուռնազյանին, ով մշակեց սոցիոլոգիական հետազոտության մեթոդաբանությունը, ինչպես նաև դեպքերի հավաքագրման հարցաշարը: Շնորհակալ ենք նաև փորձագետ Լուսինե Ղազարյանին, ով մշակեց ատելության հիմքով հանցագործությունների կարգավորման իրավական մասը, որը զետեղված է սույն հրապարակման առաջին մասում, ինչպես նաև Սոցիոսկոպ ՀԿ-ին՝ ի

դեմս վերլուծաբան Մարիամ Խալաթյանին և վերլուծության խորհրդատու Արփի Մանուսյանին, հետազոտական տվյալների վերլուծության համար, և իհարկե, բոլոր այն հարցազրուցավարներին, ովքեր կատարեցին տվյալների հավաքագրման դաշտային աշխատանքը:

Այս զեկույցը հանդիսանում է ուղերձ առ այն, թե ինչ հանցավոր հետևանքներ կարող է ունենալ խտրականությունը և անհանդուրժողականությունը հասարակության անդամների և պետության անվտանգության վրա:

Հուսով ենք, որ սույն հրապարակումը կդառնա Հայաստանում ԼԳԲՏ անձանց հանդեպ կատարվող ատելության հիմքով բռնությունների և հանցագործությունների կանխարգելման և պատշաճ քննություն և պատասխանատվություն սահմանելու հիմնաքարերից և ուղեցույցներից մեկը:

Երևան, 25 հոկտեմբերի, 2016

Նվարդ Մարգարյան

Նախագահ

Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ

Բովանդակություն

Ներածություն **6**

Մաս 1. Ատելության հիմքով հանցագործությունների իրավական կարգավորումները **9**

1.1. Ատելության հիմքով հանցագործության հասկացությունն ու էությունը **10**

1.2. Ատելության հիմքով հանցագործությունների քննության առանձնահատկությունները **13**

1.3. Ատելության հիմքով հանցագործությունները կարգավորող ՀՀ օրենսդրությունը **15**

1.4. Ատելության հիմքով հանցագործությունների իրավական կարգավորման միջազգային չափանիշները և ՀՀ միջազգային պարտավորությունները **20**

1.5. Սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը՝ որպես պաշտպանված հատկանիշներ **26**

Մաս 2. ՀՀ-ում 2010-2016թթ. փաստագրված ատելության հիմքով հանցագործությունների և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումների դեպքերի հետազոտության ամփոփում. **29**

2.1. Հետազոտության ծրագրի նկարագրություն և մեթոդաբանություն **30**

2.2 Ատելության հիմքով հանցագործությունների և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումների դրսևորումները Հայաստանում **32**

2.3 Ատելության հիմքով գործողությունների տիպաբանությունը **35**

2.4. Ատելության հիմքով հանցագործությունների նախադրյալները **41**

2.5. Ատելության հիմքով հանցագործություններ և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումներ իրականացնողների բնութագրիչները **45**

2.6. Ատելության հիմքով հանցագործությունների և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումների իրականացման միջավայրերը **47**

2.7. Պետական մարմինների դերը ատելության հիմքով հանցագործությունների բացահայտման գործընթացում **49**

2.8. Ամփոփում **52**

Ատելության հիմքով հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելմանը, քննությանը և պատասխանատվության նախատեսմանն ուղղված առաջարկություններ **54**

Հապավումներ **56**

Հիմնական հասկացությունների սահմանում **57**

Ներածություն

Սույն զեկույցի նպատակն է բացահայտելու ԼԳԲՏ*[1] անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործությունների և այլ ատելությամբ պայմանավորված դեպքերը Հայաստանյան իրականությունում: Այն նաև միտված է բացահայտելու ատելության հիմքով հանցագործությունները կարգավորող իրավական դաշտի խնդիրները և դրանց համապատասխանությունը ԼԳԲՏ մարդու իրավունքների պաշտպանության միջազգայնորեն ընդունված չափանիշներին և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին:

Սույն զեկույցը բաղկացած է երկու հիմնական մասերից: Զեկույցի առաջին մասն ամփոփում է ատելության հիմքով հանցագործությունների իրավական կարգավորումները ազգային և միջազգային մակարդակներում, ատելության հիմքով հանցագործություններին առնչվող հիմնական հասկացությունները, դրանց քննության առանձնահատկությունները, ինչպես նաև սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության՝ որպես պաշտպանված հատկանիշի արտացոլումը մարդու իրավունքների հիմնարար փաստաթղթերում:

Հետազոտության երկրորդ մասում ամփոփված են սոցիոլոգիական հետազոտության ընթացքում հավաքագրված և վերլուծված տվյալները, որը նպատակ է ունեցել դուրս բերել և հավաքագրել Հայաստանում ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների դեպքերը: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրված դեպքերը հավաքագրվել են 2010-2016թթ ժամանակահատվածում: Սույն ժամանակահատվածի ընտրությունը պատահական չէ: Դեռևս 2010 թվականին Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները, ներառյալ Հայաստանի Հանրապետությունը, միաձայն ընդունել են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի հանձնարարականը, որով

[1] Սույն զեկույցում, ինչպես նաև հետազոտությունում ներառված չեն և չեն ուսումնասիրվել ինտերսեքս անձինք, հետևաբար զեկույցում ներկայացված տեղեկատվությունը, ինչպես նաև հետազոտությունը ներկայացնում են միայն Հայաստանում ատելության հիմքով հանցագործությունների և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումների զոհ դարձած լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց իրադրությունը:

ստանձնել են պարտավորություն ձեռնարկելու կոնկրետ քայլեր ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարելու համար[2]:

Մի կողմից սույն ինտերվալում հավաքագրված դեպքերը ցույց են տալիս, թե որքանով է 2010թ-ին ԵՄ-ի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված որոշմանը միանալն արտացոլում ԼԳԲՏ անձանց հանդեպ իրականացվող խտրականության դեպքերի հավաքագրման, փաստագրման, կանխարգելման, պատշաճ քննության իրականացման, վիճակագրության վրա, մյուս կողմից մատնանշում է, թե ինչպիսի փոփոխություններ են կատարվել դրանից հետո օրենսդիր, գործադիր և դատական մարմինների գործունեությամբ պայմանավորված: Սույն ժամանակահատվածի ընտրությունը թույլ է տալիս հավաքագրել համեմատաբար նոր դեպքերը, ինչպես նաև դեպքերի թվի աճման կամ նվազման միտումները, ինչպես նաև դրանք պայմանավորող սոցիալական, քաղաքական, մշակութային, տնտեսական և այլ գործոնները:

Սոցիոլոգիական հետազոտությունն իր առջև նաև խնդիր է դրել ուսումնասիրել և բացահայտել հետևյալ հարցերը, ինչպես նաև առաջարկել լուծումներ հետևյալ հարցերին.

- Ինչո՞ւ է հասարակական լայն խմբերի կողմից ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների իրականացվում
- Հատկապես ովքե՞ր, կոնկրետ ի՞նչ խմբի ներկայացուցիչներ են ատելության հիմքով հանցագործություն իրականացնողները:
- ԼԳԲՏ անձանց դեմ իրականացվող ատելության հիմքով հանցագործությունները կոնկրետ ի՞նչ արարքներով են ուղեկցվում:
- Ինչպե՞ս է իրականացվում ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների կանխումը, հանցագործություն կատարած անձանց հայտնաբերումն ու օրենքին համապատասխան պատասխանատվության շրջանակների կիրառումը:

Զեկույցի վերջում զետեղված է առաջարկությունների փաթեթ՝ տարբեր շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներին, որոնց իրականացումը հնարավորություն կտա առավելագույնս նպաստել ատելության հիմքով հանցագործությունների կանխարգելմանը, քննությանը և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների նախատեսմանը:

---

[2] CoE Committee of Ministers, *Recommendation CM/Rec(2010)5 of the Committee of Ministers to member states on measures to combat discrimination on grounds of sexual orientation or gender identity*, 1081st meeting of the Ministers' Deputies, 31 March 2010

Սույն զեկույցը համալրում է Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ-ի կողմից նախկինում իրականացված հետազոտությունների շարքը: Զեկույցում դուրս բերված խնդիրները, ինչպես նաև դաշտային աշխատանքի ընթացքում դուրս բերված խնդիրները կներառվեն կազմակերպության ռազմավարական պլանում՝ փաստերի վրա հիմնված ջատագովության ռազմավարություն մշակելու և իրականացնելու համար:

ՄԱՍ 1

Ատելության հիմքով հանցագործությունների իրավական կարգավորումները

1.1. Ատելության հիմքով հանցագործության հասկացությունն ու էությունը

Համաձայն ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի՝ ատելության հիմքով հանցագործությունը սահմանվում է որպես քրեորեն պատժելի արարք, որը կատարվել է որոշակի ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված շարժառիթով (bias motive)[3]:

«Ատելության հիմքով հանցագործություն» եզրույթը, ուստիև, ենթադրում է հանցագործության տեսակ, և ոչ միայն քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն ենթադրող արարք: Սա նշանակում է, որ անձը կարող է կատարել ատելության հիմքով հանցագործություն նաև այն դեպքում, երբ այդպիսի արարքի, մասնավորապես ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված շարժառիթի համար օրենսդրությունը հստակ սահմանված պատասխանատվություն չի նախատեսում:

Ատելության հիմքով հանցագործությունը, որպես կանոն, բաղկացած է երկու հիմնական տարրերից՝ *(1) հանցագործություն,* որը կատարվել է *(2) ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված շարժառիթով:*

Ատելության հիմքով հանցագործության առաջին տարրը՝ հանցագործությունը, ենթադրում է, որ կատարված արարքը պետք է համարվի հանցագործություն՝ համաձայն պետության քրեական օրենսդրության: Դա կարող է լինել, օրինակ, սպառնալիք, գույքին վնաս հասցնել, ծեծ, սպանություն և այլն:

Ատելության հիմքով հանցագործության երկրորդ տարրը ենթադրում է, որ արարքը կատարվել է որոշակի շարժառիթով: Սա նշանակում է, որ ենթադրյալ իրավախախտը

[3] OSCE Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR), *"Hate Crime Laws: A practical Guide",* Warsaw, Poland 2009

դիտավորությամբ ընտրել է հանցագործության տուժողին վերջինիս *որոշակի պաշտպանված հատկանիշների պատճառով:*

Պաշտպանված հատկանիշը դա անձի կամ անձանց խմբի հատկանիշ կամ առանձնահատկությունն է, ինչպիսիք են սեռը, ռասան, մաշկի գույնը, էթնիկական ծագումը, սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը, կրոնը, տարիքը և այլն:

Պաշտպանված հատկանիշը սահմանում է անձի անհատականությունը և կազմում է անձի ինքնության մի մասը: Անձի պաշտպանված հատկանիշի մերժումը նվաստացնում է մարդուն որպես արժեքի՝ իր անհատականությամբ, կարողություններով և փորձով[4]:

Հենց պաշտպանված հատկանիշի փաստի առկայությունն է տարբերակում և առանձնացնում ատելության հիմքով հանցագործությունները քրեական հետապնդում ենթադրող այլ բնույթի իրավախախտումներից: Անձի կամ անձանց խմբի որոշակի պաշտպանված հատկանիշի նկատմամբ ատելությունը կամ անհանդուրժողակա-նությունը ատելության հիմքով հանցագործության կարևորագույն տարրն են, քանի որ հանդիսանում են այդպիսի հանցագործության կատարման միակ դրդապատճառը: Ուստիև, նման շարժառիթի բացակայությունը բացառում է նաև հանցագործության՝ ատելության հիմքով կատարված լինելու հանգամանքը:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային, տարածաշրջանային, միջազգային կոնվենցիոն և իրավապաշտպան մարմինները մշտապես կարևորել են ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարը՝ հիմնվելով այն փաստարկման վրա, որ ատելության հիմքով հանցագործությունը ոչ թե իրավախախտում է ուղղված տուժողի անձի, այլև համայնքի դեմ, և բացի մարդու հիմնարար իրավունքների խախտումներից, ենթադրում է նաև պետության անվտանգությանն ուղղված լուրջ մարտահրավեր:

Այսպես, ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի դիտարկումների համաձայն[5] ատելության հիմքով հանցագործությունները տարբերվում են քրեական հետապնդում ենթադրող այլ իրավախախտումներից հետևյալ հիմնական պատճառներով՝ քաղաքացիների իրավահավասարության խախտմամբ, տուժողի վրա ունեցած ազդեցությամբ, տուժողի ներկայացրած համայնքի վրա ունեցած ազդեցությամբ, պետության անվտանգության խնդիրներով:

---

[4] Cambridge University Press, *Protected Characteristics and Social Perceptions: An Analysis of the Meaning of 'Membership of a Particular Social Group'*, June 2003, available at: http://www.refworld.org/docid/470a33b30.html [accessed 31 October 2016]

[5] OSCE Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR), *"Hate Crime Laws: A practical Guide",* Warsaw, Poland 2009

- **Ատելության հիմքով հանցագործությունը խախտում է հավասարությունը հասարակության անդամների միջև.** Հանցագործություն կատարողը թիրախավորում է անձին կամ անձանց խմբին՝ վերջիններիս որոշակի պաշտպանված հատկանիշների պատճառով, դրանց նկատմամբ անհանդուրժողականությամբ պայմանավորված, ինչով կասկածի տակ է դնում կամ մերժում է որոշակի պաշտպանված հատկանիշ ունեցող անձի՝ հասարակության մյուս մասի հետ հավասար գոյության հնարավորությունը:
- **Ատելության հիմքով հանցագործությունն ուղղված է ոչ թե միայն տուժողի այլ ամբողջ համայնքի դեմ.** Նման դեպքերում հանցագործությունից տուժած անձի կրած հոգեկան տառապանքն ավելի մեծ է, քան այլ հանցագործությունների դեպքում, քանի որ տուժած անձը գիտակցում է, որ չի կարող վերացնել իր նկատմամբ ոտնձգության պատճառը, այն է՝ իր պաշտպանված հատկանիշը, ինչը վերջինիս հավելյալ հուզմունք և տառապանք է պատճառում: Ավելին, հանցագործություն կատարած անձն իր վարքագծով ուղերձ է հղում տուժած անձին և տուժած անձի պաշտպանված հատկանիշները կրող անձանց խմբին, որ իրենք ընդունված չեն և տվյալ հասարակության մաս կազմելու իրավունք չունեն, ինչը ավելի խոցելի և մարգինալացված է դարձնում որոշակի սոցիալական խմբերի[6]:
- **Ատելության հիմքով հանցագործությունն ուղղված է պետության անվտանգության և հասարակական կարգի դեմ.** Անհանդուրժողականությամբ և խտրականությամբ պայմանավորված հանցագործությունները նպաստում են որոշակի հատկանիշներ ունեցող խոցելի խմբերի մեկուսացմանը, հասարակության բևեռացմանը և զանգվածային անկարգությունների աճին, ինչը, ծայրահեղ դեպքերում, կարող է վերաճել ընդհուպ մինչև պատերազմական իրավիճակների երկրի սահմանների ներսում և դրա սահմաններից դուրս[7]:

---

[6] *"Hate crimes today: An age-old foe in modern dress",* American Psychological Association position paper released in 1998, http://209.85.135.104/search?q=cache:qHOGi3CfCR0J:www.apa.org/releases/hate.html+hate+crimes+impact+AMerican+Psychological&hl=en&ct=clnk&cd=1&lr=lang_en

[7] *"Hate Crimes in the OSCE Region: Incidents and Responses",* Annual Report for 2006, OSCE ODIHR p. 20; OSCE Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR), *"Hate Crime Laws: A practical Guide",* Warsaw, Poland 2009

1.2. Ատելության հիմքով հանցագործությունների քննության առանձնահատկությունները

Ատելության հիմքով հանցագործությունների բացահայտումը, ինչպես նաև լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության ապահովումը պահանջում է համընդգրկուն մոտեցում ատելության և անհանդուրժողականության շարժառիթով կատարված յուրաքանչյուր իրավախախտման նկատմամբ, որտեղ, ի թիվս այլոց, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

- **Ենթադրյալ տուժողի անձի հետ կապված հանգամանքներ.** Արդյոք տուժած անձը պատկանում է որոշակի փոքրամասնություն կազմող կամ այլ խոցելի խմբի: Բացի անձի որոշակի պաշտպանված հատկանիշներով օժտված լինելը, անձը կարող է նաև ասոցացվել որոշակի հատկանիշներ ունեցող խմբի հետ իր արտաքին տեսքի, ներառյալ՝ հագուկապի, ժեստերի, իր ծավալած գործունեության և այլ պատճառներով: Տուժողի անձի հետ կապված հատկանիշների առնչությունը արարքի կատարման հետ հասկանալու համար անհրաժեշտ է նախևառաջ դիտարկել հենց տուժած անձի կարծիքը[8], մասնավորապես այն, թե արդյոք ենթադրյալ տուժողը կարծում է, որ դեպքը կապված է իր փաստացի կամ ենթադրյալ որևէ հատկանիշ(ներ)ի հետ:

  Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ ատելության հիմքով հանցագործության օբյեկտ կարող է դառնալ նաև որոշակի գույքը: Այս դեպքում անհրաժեշտ է հասկանալ, թե արդյո՞ք իրավախախտը թիրախավորել է կոնկրետ օբյեկտը՝ դրա որոշակի խոցելի կամ փոքրամասնություն կազմող խմբերի հետ առնչություն ունենալու պատճառով, թե ոչ: Օրինակ՝ ԼԳԲՏ բարեհաճ ակումբ, կրոնական կազմակերպության հավաքատեղի և այլն:
- **Ենթադրյալ հանցագործություն կատարած անձի հետ կապված հանգամանքներ:** Իրավախախտում կատարած անձին բնութագրող հատկանիշները կարող են էական նշանակություն ունենալ հանցագործության հիմքում ընկած շարժառիթը հասկանալու համար: Այսպես՝ արդյոք ենթադրյալ հանցագործություն կատարած անձը պատկանում է կամ սերտ առնչություն ունի

[8] *"Преступления ненависти по отношению к ЛГБТ в России"* МОД Российская ЛГБТ-сеть, Санкт-Петербург 2013

հանրությանը հայտնի որևէ ատելություն սերմանող, ավանդական արժեքների պահպանմանն ուղղված, ազգայնական խմբավորման կամ նախաձեռնության հետ: Դա կարող է վկայել իրավախախտի գործածած լեզուն, արտաքին տեսքը, ներառյալ՝ թեմատիկ դաջվածքները, խորհրդանիշերը հագուստի վրա, վերջինիս անձնական կամ գործնական կապերը և շրջապատը:

- **Ենթադրյալ հանցագործություն կատարած անձի վարքագիծը:** Իրավախախտի վարքագիծը հանցագործության կատարման պահին կարող է ուղերձ լինել հանցագործության զոհին, որ ինքն ընդունված չէ և տվյալ հասարակության մաս կազմելու իրավունք չունի՝ ելնելով վերջինիս որոշակի պաշտպանվող հատկանիշներից: Դա կարող է դրսևորվել դեպքի վայրում թողած առանձին նշաններով՝ պատկերներ, գրաֆիտի, խորհրդանիշեր և այլն: Դա կարող է դրսևորվել նաև հանցագործության կատարման ժամանակ իրավախախտ անձի գործածած լեզվով կամ արտահայտություններով՝ հայհոյանք, ծաղրանք, ընդգծված նվաստացնող վերաբերմունք, որը պայմանավորված է անձի որոշակի պաշտպանված հատկանիշներով:
- **Հանցագործության կատարման վայրն ու ժամանակը:** Որոշ դեպքերում հանցագործության կատարման վայրն ու ժամանակը նույնպես կարող է ազդեցություն ունենալ հանցագործության կատարման շարժառիթը բացահայտելու համար: Օրինակ այն դեպքերում, երբ դեպքի վայրը որոշակի հատկանիշներ կրող խմբի հավաքատեղի է կամ դեպքը տեղի է ունենում հատուկ նշանակության օրվա կամ միջոցառման ընթացքում:

1.3. Ատելության հիմքով հանցագործությունները կարգավորող ՀՀ օրենսդրությունը

ՀՀ օրենսդրությունը համընդգրկուն կերպով չի նախատեսում ատելության հիմքով կատարվող հանցագործությունների կանխմանը, գործերի քննությանը, պատասխանատվության սահմանմանն ուղղված նյութական և դատավարական հիմքեր:

ՀՀ քրեական օրենսդրությունը չի սահմանում ատելության հիմքով հանցագործություններին առնչվող որևէ հիմնական հասկացություն, մասնավորապես թե ինչ է ատելության հիմքով հանցագործությունը, որոնք են պաշտպանված հատկանիշները, որոնք են նման հանցագործությունների համար նախատեսված պատժի ու պատասխանատվության առանձնահատկությունները և այլ հիմնահարցեր:

Ատելության հիմքով հանցագործությունների բացահայտման, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության դատավարական երաշխիքներ ևս նախատեսված չեն: Տարբեր երկրների փորձը և միջազգայնորեն ընդունված պրակտիկան ենթադրում է, որ ատելության հիմքով հանցագործությունների բացահայտումն ու քննությունը պահանջում է առանձնահատուկ մոտեցում, որտեղ անհրաժեշտ է համընդգրկուն կերպով անդրադառնալ հանցագործության կատարման շարժառիթների բացահայտմանը, դրան համարժեք պատասխանատվության մեխանիզմների նախատեսմանը, ինչպես նաև ապահովել արդարադատության մատչելիությունը հանցագործությունից տուժած անձանց համար՝ բացառելով կրկնազոհացման (վիկտիմիզացիայի) վտանգը[9]: Մինչդեռ նման երաշխիքներ՝ հանցագործության ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված շարժառիթների բացահայտման մեխանիզմներ, հանցագործությունից տուժած անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ ՀՀ քրեական դատավարությունն ամփոփող օրենսդրությամբ նախատեսված չեն:

Հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածը նախատեսում է հանցանքի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքները, որի 1-ին մասի 6-րդ կետը, ի թիվս այլնի, որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք նշում է. «*հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության,*

[9] OSCE Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR), *"Prosecuting Hate Crimes: A Practical Guide"* Warsaw, Poland 2014

կրոնական մոլեռանդության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով կատարելը»[10]:

Վերոնշյալ իրավական նորմի բովանդակությունից պարզ է, որ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված հանցագործությունների տեսակները, որոնք կատարվել են ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության շարժառիթով, ենթադրում են ավելի խիստ պատիժ և պատասխանատվություն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այսինքն, ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է ատելության հիմքով հանցագործությունների օրենսդրական արգելքը, բայց միայն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության հիմքերից մեկի առկայության դեպքում:

Սա նշանակում է, որ ատելության հիմքով հանցագործությունները, որոնք կատարվել են անձի սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով, նախատեսված չեն ՀՀ քրեական օրենսդրությամբ, ուստիև հաշվի չեն առնվում քրեական գործերի քննության ընթացքում, չեն դիտվում որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք:

Համաձայն ՀՀ <<Իրավական ակտերի մասին>> օրենքի[11], որը, ի թիվս այլնի, սահմանում է Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի մեկնաբանման և պարզաբանման ընդհանուր կարգը, սահմանում է, որ «...Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները» և «եթե ծագած հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով կամ իրավական այլ ակտերով, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կարող են միայն օրենքով նախատեսված դեպքերում կիրառվել համանման հարաբերություններ կարգավորող իրավական ակտերը (անալոգիա): ... Անալոգիա չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները, ազատությունները, կամ նրանց համար նախատեսվում է նոր պարտավորություն կամ պատասխանատվություն, կամ խստացվում են ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները և դրանց կիրառման կարգը...»:

---

[10] Հոդված 63, ՀՀ Քրեական օրենսգիրք 2003թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108718

[11] 86–րդ և 88–րդ հոդվածներ, ՀՀ օրենքը «Իրավական ակտերի մասին», հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=9094

ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված օրինականության սկզբունքը սահմանում է որ «արարքի հանցավորությունը, դրա պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով» և «քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է»[12]:

Սա նշանակում է, քրեական օրենսդրությունը մեկնաբանվում է իր տառացի նշանակությամբ, և արարքը կարող է անձի համար առաջացնել օրենքով սահմանված քրեական պատասխանատվություն, եթե հստակորեն ամրագրված է քրեական օրենսդրությամբ: Այսինքն, ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված այլ հիմքերի առկայության դեպքում հանցանքը որպես ատելության հիմքով հանցագործություն չի կարող որակվել:

Սա նշանակում է, որ հանցագործությունները, որոնք իրականացվել են տուժած անձի սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով երբևէ չեն որակվել որպես ատելության հիմքով հանցագործություններ, այլև որակվել են իբրև, օրինակ, սովորական ծեծ, գույքին վնասի պատճառում և այլն: Սա էլ իր հերթին նշանակում է, որ ԼԳԲՏ անձինք իրենց դեմ իրականացված ատելության հիմքով հանցագործությունների արդյունքում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ չեն ունեցել:

Փոխկապված օրենսդրություն

<u>Խտրականության արգելքը կարգավորող ազգային օրենսդրությունը</u>

Խտրականությունն արգելող առանձին օրենքների առկայությունը համարվում է ատելության հիմքով հանցագործությունները կանխարգելող մեխանիզմ[13]:

ՀՀ-ում խտրականության համընդհանուր արգելքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ[14]: Այնուամենայնիվ, ՀՀ-ում խտրականության դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ առկա չեն. ՀՀ-ն չունի խտրականության դեմ պայքարի առանձին օրենսդրություն, որը հնարավորություն կտար սահմանելու խտրականության հասկացության, տեսակների, խտրականության ենթարկված անձանց իրավական

[12] Հոդված 5, ՀՀ քրեական օրենսգիրք 2003թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108718

[13] OSCE Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR), *"Hate Crime Laws: A practical Guide",* Warsaw, Poland 2009

[14] Հոդված 29, ՀՀ Սահմանադրություն 06.12.2015 փոփոխություններով, հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510

պաշտպանության միջոցների և եղանակների, խտրականության դեպքերի քննության առանձնահատկություններին վերաբերող հիմնական իրավակարգավորումները[15]:
ՀՀ օրենսդրությունը չի ճանաչում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես խտրականության արգելքով պաշտպանված հիմքեր:

Ատելության խոսքը կարգավորող ազգային օրենսդրությունը

Ատելության սերմանող խոսքի օրենսդրական արգելքը նունպես դիտարկվում է որպես ատելության հիմքով հանցագործությունները կանխագելող և զսպող որոշակի մեխանիզմ:
Ատելության խոսք է համարվում «ցանկացած արտահայտություն, որը տարածում, դրդում, խրախուսում կամ արդարացնում է ռասայական ատելությունը, քսենոֆոբիան, հակասեմիտիզմը կամ ատելության այլ ձևերը՝ հիմնված անհանդուրժողականության վրա, ներառյալ անհանդուրժողականությունը՝ արտահայտված ագրեսիվ ազգայնականությամբ և էթնոցենտրիզմով, խտրականությամբ և փոքրամասնու-թյունների, միգրանտների և միգրանտային ծագում ունեցող անձանց նկատմամբ բռնություններով»[16]:
ՀՀ ազգային օրենսդրությամբ նախատեսված ատելության խոսքի իրավական կարգավորումները խիստ սահմանափակ են:
ՀՀ Սահմանադրությունն արգելում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով[17]: ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածը սահմանում է ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը: Հիշյալ հոդվածի 1-ին մասի համաձայն ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները պատժվում են որոշակի տուգանքով, ինչպես նաև ազատությունից զրկմամբ[18]: Սակայն պետք է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածը

[15] *Legal Research: Is it expedient to adopt a separate "non-discrimination law",* Eurasian Partnership Foundation, Yerevan 2015, available at: http://bit.ly/2eTddas
[16] Recommendation No. R(97)20 of the Council of Europe Committee of Ministers *on "Hate Speech"* 30 October 1997
[17] Հոդված 77, ՀՀ Սահմանադրություն 06.12.2015 փոփոխություններով, հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510
[18] Հոդված 226, ՀՀ քրեական օրենսգիրք 2003թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108718

գործնականում գրեթե չի կիրառվում, իսկ սույն նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ ատելության խոսքից պաշտպանություն նախատեսված է խտրականության արգելքով պաշտպանված մի քանի հիմքերի դեպքում միայն, այն է՝ ազգային, ռասայական և կրոնական հիմքերը: Մնացած հիմքերով ատելության խոսքից պաշտպանություն ներպետական օրենսդրությունը չի նախատեսում: Բացառություն է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 397[1]-րդ հոդվածը, որը բացի նշված 3 հիմքերը նախատեսում է նաև մաշկի գույնը և էթնիկական ծագումը:

Այսինքն, ատելության խոսքը անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով նույպես չի պաշտպանվում ՀՀ օրենսդրությամբ:

1.4. Ատելության հիմքով հանցագործությունների իրավական կարգավորման միջազգային չափանիշները և ՀՀ միջազգային պարտավորությունները

Ատելության հիմքով հանցագործությունների արգելքը և դրա դեմ պայքարի արդյունավետ իրավական միջոցների նախատեսման պարտավորությունն ամրագրված է մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար փաստաթղթերում:

Դեռևս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն ամրագրել է խտրականության համընդհանուր արգելքը և մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության եւ հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումը[19]:

ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածն ամրագրում է պետությունների պարտավորությունն ապահովելու դաշնագրով ամրագրված իրավունքների ճանաչումը առանց որևէ խտրականության, իսկ 26-րդ հոդվածը սահմանում է, որ *<<...բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ և, առանց որևէ խտրականության, ունեն օրենքի հավասար պաշտպանության իրավունք; այդ առնչությամբ որևէ կարգի խտրականություն պետք է արգելվի օրենքով, և օրենքը բոլոր անձանց համար պետք է երաշխավորի հավասար և արդյունավետ պաշտպանություն խտրականությունից, ըստ որևէ հատկանիշի, այն է՝ ըստ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծննդի կամ այլ հանգամանքի>>*[20]:

Սրանով ՔՔԻՄԴ-ն պարտավորեցնում է անդամ պետություններին իրականացնել արդյունավետ քննություն և նախատեսել պատասխանատվություն անձի իրավունքների ոտնահարումների առիթով և դա անել առանց որևէ խտրականության[21]:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն իր 105-րդ նստաշրջանի արդյունքում ՀՀ կողմից Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի իրականացման վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում նշեց, որ Հայաստանի կառավարությունը պետք է ապահովի, որ խտրականության սահմանումը ներառի

---

[19] The United Nations. (1948). *Universal Declaration of Human Rights*, available at: http://www.un.org/en/universal-declaration-human-rights/

[20] UN General Assembly, *International Covenant on Civil and Political Rights*, 16 December 1966, United Nations, Treaty Series, vol. 999, p. 171, available at: http://www.refworld.org/docid/3ae6b3aa0.html [accessed 31 October 2016]

[21] UN Human Rights Committee (HRC), *CCPR General Comment No. 18: Non-discrimination*, 10 November 1989, available at: http://www.refworld.org/docid/453883fa8.html [accessed 31 October 2016]

դաշնագրով նախատեսված բոլոր ձևերը: Այնուհետև հավելեց, որ պետությունը պետք է պայքարի անհանդուրժողականությամբ և ատելությամբ պայմանավորված բռնություն-ների դեմ և ապահովի փոքրամասնությունների պաշտպանվածությունը՝ դիտարկելով այն դաշնագրի մի քանի հոդվածների (2, 18, 20 և 26) խախտման լույսի ներքո[22]:

Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան պարտավորեցնում է անդամ պետություններին օրենսդրորեն ամրագրել ատելության հիմքով հանցագործությունների արգելքը և ապահովել նման հանցագործություններից տուժած անձանց համար արդարադատության մատչելիությունը, մասնավորապես վիկտիմիզացիայի արգելքը, հետապնդումներից զերծ լինելու իրավական և փաստացի ապահովումը[23]:

Իր որոշումներից մեկում Ռասայական խտրականության վերացման կոմիտեն վերահաստատեց, որ պետությունը, մասնավորապես իրավապահ մարմինն ունի պարտավորություն ապահովելու հանցագործության՝ ատելությամբ պայմանավորված շարժառիթի բացահայտմանն ուղղված համընդգրկուն մեխանիզմներ և երաշխավորելու, որ պրակտիկայում հանցագործության հիմքում ընկած շարժառիթն ամբողջությամբ բացահայտվի: Այն իրականացնելու ձախողումն այն դեպքում, երբ առկա է հանցագործության շարժառիթը հաստատող primae facie ապացույց, հանդիսանում է կոնվենցիայով պաշտպանվող հետևյալ հիմնարար դրույթների՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի (հոդված 6) և բոլոր համապատասխան միջոցներով ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման (հոդված 2.1.(դ)) խախտում: [24]

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես բազմիցս անդրադարձել է ատելության հիմքով հանցագործությունների կոնտեքստում պետության պարտա-վորությունների ծավալին: ՄԻԵԴ-ն այս հարցին իր տարբեր գործերում անդրադարձել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին

[22] UN Human Rights Committee (HRC), UN Human Rights Committee:Concluding Observations Armenia CCPR/C/ARM/CO/2, 105th Session, 9-27 July 2012, available at: http://www.ohchr.org/EN/Countries/ENACARegion/Pages/AMIndex.aspx

[23] UN Committee on the Elimination of Racial Discrimination General Comment 31 on the prevention of racial discrimination in the administration and functioning of the criminal justice system, Sixtieth Session, Supplement No. 18 (2005) UN Doc A/60/18, p. 103, para. 15.

[24] UN Committee on the Elimination of Racial Discrimination, Communication No. 46/2009, Opinion adopted by the Committee at its eightieth session, 13 February to 9 March 2012, CERD /C/80/D/46/2009, in the case of *Mahali Dawas and Yousef Shava v. Denmark.*

եվրոպական կոնվենցիայով[25] ամրագրված խտրականության արգելքի (հոդված 14) իրավունքի լույսի ներքո, որի պատշաճ իրականացումը ենթադրում է պետության կողմից անհրաժեշտ օրենսդրական, վարչական և այլ միջոցառումներ իրականացնելու պարտականություն, որոնք կապահովեն անձանց օրենքի առջև և փաստացի հավասարությունը[26]:

Հավասարության սկզբունքի ապահովումը նշանակում է ոչ միայն բոլորի նկատմամբ նույնանման վերաբերմունք նույնանման պայմաններում, այլ նաև պետության կողմից կառուցողական գործողությունների նախատեսում այն դեպքերում, երբ անհրաժեշտ է վերացնել կամ նվազեցնել այս կամ այն խմբի նկատմամբ խտրականություն ծնող կամ խթանող պայմանները[27]:

Հավասարության իրավունքի պաշտպանությունը ենթադրում է ոչ միայն պետության կողմից ուղղակի միջամտության արգելքը, այլ նաև վերջինիս պարտավորությունը պաշտպանելու երրորդ անձանց կողմից հնարավոր միջամտությունից: Պետության կողմից նման միջամտության հանդուրժումն անթույլատրելի է, քանի որ այն կնշանակի, որ որոշ փոքրամասնությունների նկատմամբ նախապաշարմունքն ու խտրականությունն արդարացված է և ընդունելի[28]: Դատարանը նաև նշել է, որ խտրականությունը անձի սեռական կողմնորոշման հիմքով նույնքան խնդրահարույց է, որքան «սեռի, ռասայի, մաշկի գույնի» հիմքով խտրականությունը[29]:

Իր *Identoba and Others v Georgia* գործով Դատարանը վճռեց, որ ատելության հիմքով հանցագործությունը, որն իրականացվել է անձի սեռական կողմնորոշման հիմքով հանդիսանում է ՄԻԵԿ-ի խոշտանգումներից կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու (հոդված 3) և խտրականության արգելքի (հոդված 14) իրավունքների խախտում[30]:

Սույն գործով դատարանը վերահաստատեց այն փաստը, որ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությամբ պայմանավորված հանցագործությունները նույնքան լուրջ են, որքան հանցագործությունները

[25] Council of Europe, *European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms*, as amended by Protocols, 4 November 1950

[26] UN Human Rights Committee (HRC), *CCPR General Comment No. 18: Non-discrimination*, 10 November 1989, part 6

[27] Ibid, Part 10

[28] Members of the Gldani Congregation of Jehovah's Witnesses and Others v. Georgia, no. 71156/01, §141, ECHR 2007

[29] Vejdeland and others v. Sweden, no 1813/07, ECHR 2012

[30] Identoba and Others v Georgia, no 73235/12, ECHR 2015

ատելությամբ պայմանավորված այլ շարժառիթներով: Ինչպես նշել է Դատարանը, «Բռնության ու դաժանության այն դեպքերը, որոնց հիմքում ընկած է խտրականությունը, չեն կարող դիտվել հավասար այն դեպքերի հետ, որոնք նման ենթատեքստ չունեն: Նման մոտեցումը կնշանակեր աչք փակել արարքի էական առանձնահատկությունների վրա, որոնք այս պարագայում հատկապես կործանարար են հիմնարար իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Տարբերակված մոտեցում չցուցաբերելը, երբ արարքներն էապես տարբեր են, կարող է հանգեցնել անարդարացի վերաբերմունքի Կոնվենցիայի 14-րդ հոդվածով սահմանված իրավունքի ապահովման տեսանկյունից»:[31]

Ավելին, անձի նկատմամբ ֆիզիկական ոտնձգությունը սեռական կողմնորոշման հիմքով հանդիսանում է անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, քանի որ անձի մոտ առաջացնում է «վախի, անհանգստության և անվտանգության կորստի» զգացողություններ[32], այսինքն ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով սահմանված իրավունքի խախտում, որը բացարձակ է՝ ենթակա չէ որևէ սահմանափակման:

Հարկ է նաև նշել, որ նույն վճռով Դատարանը հստակեցրեց ատելության հիմքով հանցագործությունների դեպքում պետության պարտավորությունների ծավալը, նշելով, որ այն դեպքերում, երբ հասարակության մեջ առկա է բացասական վերաբերմունք սեռական փոքրամասնությունների նկատմամբ և ԼԳԲՏ անձանց նկատմամբ հարձակումների հնարավորություն, իրավապահ մարմիններն ունեն «էական պոզիտիվ պարտավորություն» պաշտպանելու ԼԳԲՏ անձանց: Ավելին, պետություններն ունեն դատավարական պարտականություն հետաքննելու հոմոֆոբիկ բռնությունը՝ «ատելությամբ պայմանավորված շարժառիթը դիմակազերծելու հատուկ ուշադրությամբ»[33]:

Դատարանն իր ավելի վաղ որոշումներում ևս անդրադարձել է սույն խնդրին:

Օրինակ, իր *Nachova and Others v. Bulgaria*-ի գործով Դատարանը նշեց, որ ատելության հիմքով հանցագործությունների դեպքում պետություններն ունեն արագ և համընդգրկուն քննություն իրականացնելու պարտավորություն, որը մի կողմից պարտավորեցնում է պետությանն ապահովելու, որ իր իրավասության տակ գտնվող անձինք չենթարկվեն

[31] Identoba and Others v Georgia, no 73235/12,§ 67, ECHR 2015, Secic v. Croatia, no 40116/02, ECHR 2007
[32] Identoba and Others v Georgia, no 73235/12,§ 70, ECHR 2015
[33] Identoba and Others v Georgia, no 73235/12, § 80, ECHR 2015

ատելության հիմքով հանցագործությունների մասնավոր անձանց կողմից, մյուս կողմից՝ պարտավորեցնում է իրականացնել դեպքի քննություն ողջամիտ ժամկետներում[34]:
Դատարանը ատելության հիմքով հանցագործությունները կարգավորող օրենսդրության բացակայության վերաբերյալ *Angelova and Iliev v. Bulgaria*-ի գործի քննության ժամանակ նշեց, որ ատելության հիմքով հանցագործությունները կարգավորող հատուկ օրենքի բացակայությունը չի խոչընդոտում իրավապահ մարմինների իրավասությանը բացահայտելու հանցագործության շարժառիթը քրեական գործի ընթացքում, եթե ընդհանուր օրենսդրությունը նախատեսում է նմանատիպ հանցագործությունների արգելքը[35]: Սա նշանակում է, որ ոլորտը կարգավորող հատուկ օրենսդրության բացակայությունը չի կարող արդարացնել պետության անգործությունը կամ խնդրի լուծմանն ուղղված անհամաչափ քայլերը[36]:

Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)5 հանձնարարականը «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ»

Դեռևս 2010 թվականին Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները, ներառյալ Հայաստանի Հանրապետությունը, միաձայն ընդունել են սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դեմ պայքարի հանձնարարականը, որով ստանձնել են պարտավորություն՝ ձեռնարկելու համընդգրկուն, ներառյալ օրենսդրական, վարչական և այլ միջոցառումներ ՍԿԳԻ խտրականության դեմ պայքարի առիթով:[37]
Նույն հանձնարարականով Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլնի, պարտավորվել է՝

- ապահովել ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրականացվող ատելության հիմքով հանցագործությունների արդյունավետ, արագ և անկախ քննությունը,

[34] *Nachova and Others v. Bulgaria*, nos 43577/98 and 43579/98, ECHR 2005
[35] *Angelova and Iliev v Bulgaria*, no 55523/00, ECHR 2007
[36] Similar cases: *Stoica v. Romania*, no 42722/02, ECHR 2008, Secic v. Croatia, no 40116/02, ECHR 2007, *Milanovic v. Serbia*, no 44614/07, ECHR 2010
[37] CoE Committee of Ministers, *Recommendation CM/Rec(2010)5 of the Committee of Ministers to member states on measures to combat discrimination on grounds of sexual orientation or gender identity,* 1081st meeting of the Ministers' Deputies, 31 March 2010

- սահմանել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը որպես ատելության հիմքով հանցագործության պատիժը և/կամ պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք,
- խրախուսել ատելության հիմքով հանցագործությունից տուժած անձանց և վկաներին իրավասու մարմիններ հաղորդել նման հանցագործությունների և ատելության հիմքով այլ իրավախախտումների վերաբերյալ տվյալներ,
- փաստագրելու սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունները և ատելությամբ ու անհանդուրժողականությամբ պայմանավորված այլ իրավախախտումներ:

Ի լրումն այս հանձնարարականի, տեղին է նաև հիշատակել ԵԱՀԿ մասնակից պետությունների, ներառյալ Հայաստանի Հանրապետության հանձնառությունները պայքարելու ատելության հիմքով հանցագործությունների դեմ, որոնք կարգավորվում են ԵԱՀԿ նախարարների խորհրդի մի շարք որոշումներով և նախատեսում են ատելության հիմքով հանցագործությունների կանխման, փաստագրման, պատասխանատվության նախատեսման, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանման, խնդրի լուծմանն ուղղված պետության ընդհանուր քաղաքականության մշակմանն ուղղված համալիր գործողությունների հանձնառություններ[38]: Այնուամենայնիվ, այս հիշատակվող ԵԱՀԿ փաստաթղթերը հանդիսանում են ոչ թե իրավական, այլ քաղաքական փաստաթղթեր:

Հարկ է նշել, որ Հայաստանի հանրապետությունը մինչ օրս չի փաստագրել ատելության հիմքով հանցագործությունների որևէ պաշտոնական կամ ոչ պաշտոնական տվյալներ, ներառյալ հանցագործությունների, որոնք իրականացվել են անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով[39]: Մինչդեռ վերջիններիս համադրությունը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հաղորդած տվյալների, ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ատելության հիմքով հանցագործությունների տարեկան զեկույցների հետ, ակնհայտ հակասություն է առաջացնում[40]:

[38] OSCE Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR), *"Prosecuting Hate Crimes: A Practical Guide"* Warsaw, Poland 2014, page 89

[39] OSCE Hate Crimes Reporting: Official Country Information, available at: http://hatecrime.osce.org/armenia

[40] Ibid

1.5. Սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը որպես պաշտպանված հատկանիշներ

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածը սահմանում է, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: ՄԱԿ-ի կոնվենցիոն մարմինները բազմիցս հաստատել են, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ևս հանդիսանում են խտրականության արգելքով պաշտպանված հիմքեր: Սա նշանակում է, որ ցանկացած տարբերակում անձի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով հակասում է մարդու հիմնարար իրավունքների սկզբունքներին, ինչպես դա կլիներ մաշկի գույնի, ռասայի, սեռի, կրոնի կամ այլ հատկանիշի դեպքում: Այս փաստը շարունակաբար վերահաստատվել է մարդու իրավունքների կոնվենցիոն մարմինների կողմից իրենց որոշումներում, ընդհանուր մեկնաբանություններում: Դրանք են, ինչպես բազմիցս վերը նշվեց, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն, Երեխաների իրավունքների պաշտպանության կոմիտեն, Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեն, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեն, Եվրոպական Միության և Եվրոպայի խորհրդի մարմինները, ներառյալ դատական մարմինները և այլն:

Սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը՝ որպես խտրականության արգելքով պաշտպանված հիմքեր, իրենց համընդգրկուն մեկնաբանությունը ստացան 2006 թվականի «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության նկատմամբ մարդու իրավունքների միջազգային օրենսդրության կիրառման յոգյակարտյան սկզբունքներում» կամ «Յոգյակարտյան սկզբունքներում», որտեղ վերահաստատվեց մարդու հիմնարար իրավունքների կիրառության անպայմանությունը և անքակտելիությունը սեռական կողմնորոշման և գենդերային հիմքով կատարված իրավախախտումների նկատմամբ[41]: Այս սկզբունքները հետագայում հիմք ծառայեցին մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և տարածաշրջանային կոնվենցիոն մարմինների կողմից համապատասխան իրավական ամրագրումների ու մեկնաբանությունների համար, որոնք իմպերատիվ կերպով սահմանեցին սեռական

[41] International Commission of Jurists (ICJ), *Yogyakarta Principles - Principles on the application of international human rights law in relation to sexual orientation and gender identity*, March 2007,available at: http://www.yogyakartaprinciples.org

կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով իրավախախտումների արգելքը և դրանց նկատմամբ խտրականության արգելքի նորմերի կիրառությունը[42]:

Օրինակ, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն իր Ընդհանուր մեկնաբանություն Թիվ 20-ում, որի նպատակը խտրականության արգելքի նորմի մեկնաբանումն էր, ամրագրեց, որ ՏՍՄԻԿ-ում ամրագրված խտրականության արգելքով պաշտպանված «այլ կարգավիճակը» ներառում է սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, և անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի անձի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը չհանդիսանա խոչընդոտ Կոնվենցիայով ամրագրված իրավունքների պաշտպանության համար[43]:

Ինչպես վերը նշեցինք, հետագայում խնդիրն իր դատական ամրագրումը ստացավ նաև ՄԻԵԴ-ի կողմից, որը նշեց, որ խտրականությունը անձի սեռական կողմնորոշման հիմքով նույնքան խնդրահարույց է, որքան «սեռի, ռասայի, մաշկի գույնի» հիմքով խտրականությունը[44]՝ այսպիսով կոնվենցիայի մակարդակով հավասարեցնելով սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը պաշտպանվող այլ հատկանիշների հետ:

Արդյունքում, սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը կազմում են մարդու իրավունքներն ամրագրող միջազգային իրավական փաստաթղթերի, հետևաբար այդ միջազգային փաստաթղթերը վավերացրած պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության բաղկացուցիչ մասը:

---

[42] United Nations, Office of High Commissioner of Human Rights *"Born Free and Equal: Sexual Orientation and Gender Identity in International Human Rights Law"*, UN 2012

[43] UN Committee on Economic, Social and Cultural Rights (CESCR), *General comment No. 20: Non-discrimination in economic, social and cultural rights (art. 2, para. 2, of the International Covenant on Economic, Social and Cultural Rights)*, 2 July 2009, art. 2, para. 2)

[44] Vejdeland and others v. Sweden, no 1813/07, ECHR 2012

ՄԱՍ 2

ՀՀ-ում 2010-2016թթ. փաստագրված ատելության հիմքով հանցագործությունների և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումների դեպքերի հետազոտության ամփոփում

2.1. Ծրագրի նկարագրություն և մեթոդաբանություն

«ՍԿԳԻ հիմքով ատելության հանցագործություններ. փաստերի հավաքագրում» թեմայով հետազոտության տվյալների հավաքագրումն իրականացրել է Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ-ն, իսկ հետազոտական տվյալների վերլուծությունը՝ «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն ՀԿ-ն:

Հետազոտությունը նպատակ ունի դուրս բերել Հայաստանում ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների դեպքերը:

Հետազոտության մասնակցել են Հայաստանում 16 տարեկանից բարձր ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները, ովքեր եղել են ատելության հիմքով հանցագործությունների զոհ կամ ականատես: Հետազոտության մեջ ընդգրկվել են 198 ԼԳԲՏ անձինք, ովքեր պատմել են 2010թ.-ի ապրիլից մինչև 2016թ.-ի ապրիլն ընկած ժամանակահատվածում ԼԳԲՏ անձանց հանդեպ իրականացված ատելության հիմքով գործողությունների դեպքերի մասին:

Քանի որ ԼԳԲՏ անձինք Հայաստանում հաճախ թաքցնում են իրենց սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը՝ խուսափելու համար խտրական վերաբերմունքից և բռնություններից, ապա հետազոտությունների մեջ նրանց ներգրավումը դառնում է դժվարին հարցերից մեկը: Վերոնշյալ սահմանափակումը հաղթահարելու համար հետազոտական ընտրանքը կառուցվել է ձնակույտի մեթոդի միջոցով: Նախկինում Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ-ի Իրավական կլինիկային ատելության հիմքով հանցագործության թիրախ լինելու խնդրով դիմած ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներից ընտրվել է առաջին դեպքը, ում օգնությամբ հասանելի են դարձել համայնքի այն անդամները, ովքեր ևս նմանօրինակ փորձի կրող են: Հետազոտության մեջ ներառված անձանց անանունությունը խստորեն պահպանվել է, և հարցազրույցի արդյունքում նրանց տրամադրվել է հոգեբանական կամ իրավական խորհրդատվություն:

Հաշվի առնելով, որ ատելության հիմքով հանցագործությունները հազվադեպ են բարձրաձայնվում Հայաստանում և այն, որ դժվար է գնահատել հանցագործությունների իրագործման խորքային շարժառիթները՝ որպես խնդրի բացահայտման մեթոդ ընտրվել է զոհերի և ականատեսների հետ անհատական հարցազրույցների մեթոդը: Կիրառված կիսաստանդարտացված հարցաթերթի միջոցով դուրս են բերվել որակական, ինչպես նաև որոշ քանակական տվյալներ:

Հարցաթերթը ներառում է հարցերի հետևյալ շրջանակը.

- ատելության հիմքով հանցագործություններ իրականացնողների բնութագրիչների նկարագրություն,
- իրավախախտների մոտիվացիայի պատճառներ,
- տվյալ միջադեպում ԼԳԲՏ անձանց հանդեպ անհանդուրժողականությամբ և ատելությամբ պայմանավորված գործողությունների դուրսբերում, դրանց մանրամասն նկարագրություն,
- ատելության խոսքի դուրսբերում,
- համապատասխան պետական մարմինների կողմից միջամտությունը ատելության հիմքով հանցագործությունների կանխմանը, պատշաճ քննությանը:

Հետազոտության շրջանակներում արձանագրվել և վերլուծվել են ատելության հիմքով հանցագործությունների դեպքերը, դուրս են բերվել ցուցիչներ, որոնք թույլ են տվել հստակեցնելու՝ ԼԳԲՏ անձանց նկատմամբ հանցագործությունների իրականացման շարժառիթների՝ ՍԿԳԻ-ով պայմանավորված լինելը: Հետազոտական տվյալները հաշվետվության մեջ դասակարգվել և խմբավորվել են ըստ հանցագործության իրականացման ժամանակաշրջանի և դեպքի վայրի, որոնք առանցքային չափանիշներ են հնարավոր օրինաչափությունները դուրս բերելու տեսանկյունից:

2.2. Ատելության հիմքով հանցագործությունների և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումների դրսևորումները Հայաստանում

Հայաստանը և՛ միջազգային, և՛ ազգային իրավական ակտերով պարտավորվել է ընդունել սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով հավասարության ապահովման և խտրականության բացառման սկզբունքները[45]: Չնայած նշվածին, հայաստանյան հասարակությունը ունի ԼԳԲՏ անձանց հանդեպ անհանդուրժողականության արտահայտված դրսևորումներ, որի մասին կարելի է փաստել ԼԳԲՏ անձանց հետ ունեցած հարցազրույցներից, ինչպես նաև նախկինում արված հետազոտություններից: ԼԳԲՏ անձինք շարունակում են ահաբեկումների, հետապնդումների, ֆիզիկական և հոգեբանական բռնությունների ենթարկվել՝ ընտանիքում, առողջապահության ոլորտում, իրավապահ մարմիններում, զինված ուժերում, կրթական հաստատություններում և այլն: Հասարակությունը սահմանափակ տեղեկատվություն և գիտելիք ունի ընդհանուր առմամբ սեռականության, սեռական կողմնորոշմանն ու գենդերային ինքնությանն առնչվող հարցերի վերաբերյալ: Հանրության կողմից շատ հաճախ անտարբերության են մատնվում ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարումներն ու ճնշումները: Լինելով հանցագործությունների ականատես՝ մարդիկ հաճախ անտեսում են ԼԳԲՏ անձանց դեմ կիրառվող բռնությունները, իսկ երբեմն, նույնիսկ իրենց աջակցությունն են ունենում դրանց իրագործման հարցում: ԼԳԲՏ անձանց դեմ իրականացվող հանցագործությունները և հասարակական դիրքորոշումները հոգեբանական ճնշվածության, ինքնաքննադատության, բարդույթների առաջացման և հասարակությունում ոչ լիարժեք ինքնարտահայտման պատճառ են դառնում: ԼԳԲՏ անձինք հաճախ չեն դիմում իրավապահ մարմիններին իրենց նկատմամբ իրականացված հանցագործությունները բացահայտելու համար: Մի կողմից կա տեղեկատվության պակաս իրավապահ մարմինների հետ հարաբերվելու հարցերում, իսկ մյուս կողմից՝ անվստահություն նրանց նկատմամբ: ԼԳԲՏ անձանց նկատմամբ կիրառվող ոտնձգությունների և բռնությունների մի շարք դեպքեր իրականացվում են նաև իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից, սակայն իրավական բացերի պատճառով դրանք չեն արձանագրվում և մնում են

[45]«Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն», ՓԻՆՔ Արմենիա, Երևան, 2016, էջ 12

չբացահայտված[46]: Ավելին, օրենսդրությունը չի նախատեսում հատուկ պաշտպանություն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով դրսևորվող խտրակա-նությունից և հանցագործություններից[47]: ՀՀ քրեական օրենսգիրքը չի տարբերակում ոչ ատելության հիմքով հանցագործությունը, ոչ ատելության խոսքն իբրև առանձին հանցագործության տեսակ: Հայաստանը տարածաշրջանում այն քիչ երկրներից է, որը ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործությունների մասին պաշտոնական տվյալներ չի տրամադրել Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակին (ԺՀՄԻԳ)[48]: ԼԳԲՏ անձինք նշում են, որ խտրակա-նության և ատելության հիմքով հանցագործություններից պաշտպանվելու համար առավելապես դիմում են ՀԿ-ներին, որտեղ մի շարք կազմակերպություններ իրականացնում են ծրագրեր և միջոցառումներ՝ պաշտպանելու ԼԳԲՏ անձանց իրավունքներն ու շահերը:

«ՍԿԳԻ հիմքով ատելության հանցագործություններ. փաստերի հավաքագրում» հետազոտության շրջանակներում ուսումնասիրված 198 դեպքից կարող ենք դուրս բերել ատելության հիմքով հանցագործությունների զոհերի և ականատեսների ներքոնշյալ բաշխվածությունը:

Աղյուսակ 1

Ատելության հիմքով հանցագործությունների զոհ	Ատելության հիմքով հանցագործությունների ականատես
79,7%	**20,3%**

[46] Տե՛ս նույն տեղում, էջ 16
[47] Տե՛ս նույն տեղում
[48] Տե՛ս նույն տեղում

Տվյալ հետազոտության շրջանակներում դիտարկած 198 դեպքից, անհանդուրժողականության և ատելության հիմքով հանցագործությունների զգալի մասը դրսևորվել է 2015թ-ին՝ կազմելով 50%, իսկ 2016թ-ին՝ 16,4%:

Աղյուսակ 2

Տարեթիվ	**%**
2010	1,7%
2011	4,6%
2012	11,6%
2013	6,4%
2014	9,3%
2015	50%
2016 ապրիլ	16,4%

2.3. Ատելության հիմքով գործողությունների տիպաբանությունը

Վեր հանելով Հայաստանում ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ ատելության հիմքով գործողությունները՝ դրանք հնարավոր է դասակարգել իբրև քրեորեն պատժելի արարքներ՝ հանցագործություններ, այնպես էլ գործողություններ, որոնք քրեորեն պատժելի չեն: Ուսումնասիրված դեպքերից կարող ենք առանձնացնել դրանցից առավել տարածվածները՝ տալով յուրաքանչյուրի դրսևորման առանձնահատկությունները:

- ✓ **Ատելության հիմքով հանցագործություններ**

Սպառնալիքն՝ իբրև ատելության հիմքով հանցագործության տեսակ բնութագրվում է հայհոյանքներով և հաճախ արտահայտվում է ֆիզիկական բռնություն և ուժ գործադրելու կոչերով, մասնավորապես՝ սպանելու, ոչնչացնելու, ծեծելու, «մատաղ անելու», «սատկացնելու» հայտարարություններով:

> **Երբ ինքը հարձակվեց ինձ վրա, բղավեց, որ պետք է սպանի ինձ նման «գոմիկին»:**
>
> Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

Ֆիզիկական բռնություն, որն ուղեկցվում է ծեծով՝ հանգեցնելով առողջության վնասի: ԼԳԲՏ անձանց նկատմամբ ֆիզիկական բռնության դեպքերը տեղի են ունենում ինչպես հասարակական վայրերում, այնպես էլ ընտանիքներում: Այս մասին ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդ բաժիններում:

> **Ասաց, որ պատրաստ է ինձ ոչնչացնել, որպեսզի իր երեխան հանգիստ ապրի: Հայհոյեց՝ ասելով, որ ես մարդ չեմ: Նաև սպառնաց, որ ծնողներիս կասի ու դատի կտա ինձ, որպեսզի բանտում «փտեմ»:**
>
> Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

Հայրս մոտ 13 անգամ հարվածեց գլխիս: Ես միայն հիշում եմ, որ պառկած լացում էի, ու քթիցս կամ ատամիցս [լավ չեմ հիշում] արյուն էր գալիս: Հետո ինձ բարձրացրեց բազմոցի վրա ու նորից հարվածեց:

Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

Անձի ազատության սահմանափակում, որը ԼԳԲՏ անձանց կողմից ընկալվում է իբրև ազատ ընտրության և տեղաշարժման իրավունքների խախտում: Անձի ազատության սահմանափակումը ևս դասակարգվում է որպես ատելության հիմքով գործողության տեսակ: Նման գործողությունները ԼԳԲՏ անձանց հաստատմամբ խոչընդոտում են իրենց՝ որպես հասարակության լիարժեք անդամի ինքնահիրացմանը: Իբրև ատելության հիմքով գործողություններ՝ ազատության սահմանափակումները լայնորեն դրսևորվում են ԼԳԲՏ անձանց ընտանիքներում՝ խոչընդոտելով նրանց հաղորդակցությունների շրջանակը, ինչպես նաև հարկադրաբար մեկուսացնելով հասարակությունից:

Առողջությանը վնասի պատճառումն իբրև ատելության հիմքով հանցագործության տեսակ՝ հետևանք է ֆիզիկական բռնության գործադրմանը: ԼԳԲՏ անձանց պնդմամբ, առողջությանը վնասի պատճառումն իբրև բռնության տեսակ, կարող է հանգեցնել կյանքին վտանգ սպառնացող հիվանդությունների ձեռքբերմանը:

Լինում է, որ ես հազում եմ, և արյուն է գալիս: Երբեմն լիտրերով արյուն եմ հետ տալիս: Պատահում է, որ արթնանում եմ և ամբողջությամբ արյան մեջ եմ լինում: Բժիշկներն ախտորոշել են, որ կարող եմ անգամ քնած վիճակում մահանալ՝ խեղդվելով սեփական արյունից:

Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

Հոգեբանական բռնություն, որը հաճախ ԼԳԲՏ անձանց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հանրայնացման սպառնալիք է: ԼԳԲՏ անձանց նկատմամբ կիրառվում են հատուկ ճնշման մեխանիզմներ, որոնք սպառնում են բացահայտել նրանց

ինքնությունը ընտանիքում, շրջապատում, հասարակության լայն շերտերի շրջանակներում: Ատելության հիմքով գործողությունների այս տեսակը իր հերթին ազդում է ԼԳԲՏ անձանց և նրանց ընտանիքի միջև հարաբերությունների խզմանը և, ընդհանուր առմամբ, սոցիալական օտարմանը: Իբրև հոգեբանական բռնության կիրառման միջավայր, հաճախ հանդես են գալիս ինստիտուցիոնալ կառույցները՝ բանակ, դպրոց, ԲՈՒՀ-եր և այլն: ԼԳԲՏ անձանց հանդեպ կիրառվում են մեկուսացնող, օտարող մեխանիզմներ՝ պիտակավորելով նրանց, չեզոքացնելով շփումը խմբի այլ անդամների հետ:

Կուրսընկերներս, ինչպես նաև դասախոսներիս որոշ մասը (հատկապես՝ դեկանի տեղակալը) խտրական վերաբերմունք էին ցուցաբերում, ժամանակ առ ժամանակ հումորներ էին անում և, այդպիսով, հոգեբանական ճնշում էին գործադրում ինձ վրա:

Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

Բանակի դրվածքն այնպիսին է, որ ԼԳԲՏ մարդկանց հեռու են պահում մնացած զինվորներից: Նախկինում նրանց առանձին զորամաս էին տանում, իսկ հիմա կարծես թե զորացրում են: Գիտեմ դեպք, երբ զինվորները հրաժարվել են ճաշարանում հաց ուտել՝ պատճառաբանելով, որ այդ նույն սպասքով նույնասեռական մարդ է հաց կերել:

Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

Բռնաբարություն, բռնաբարության փորձ, որոնց առավելապես ենթարկվում են տրանսգենդեր անձինք՝ սեքս-աշխատողներ լինելու պատճառով: Հայաստանում տրանսգենդեր անձինք զբաղվածության լուրջ խնդիր ունեն.գործատուները հրաժարվում են նրանց աշխատանքի ընդունել: Ըստ էության, սեքս-աշխատանքը տրանսգենդեր անձանց համար դառնում է միակ հնարավորությունը, ինչն էլ, հարցվածների պնդմամբ, բռնաբարության փորձի կամ բռնաբարության հիմք է դառնում: Իբրև ատելության հիմքով հանցագործության տեսակ՝ սրանք լայն տարածում չունեն:

Գողություն, գույքի վնասում, որոնք չունեն առաջնային նպատակաուղղված բնույթ, սակայն, ինչպես նշում են ատելության հիմքով հանցագործությունների զոհերը և ականատեսները, դրանք իրենց հանդեպ կիրառվող բռնի գործողությունների ածանցյալը կամ հետևանքն են:

> **Ինձ ծեծել են, որի արդյունքում կոտրվել է քիթս, գլուխս բացվել է մի քանի տեղից: Այնուհետև գողացել են պայուսակս և հեռախոսս:**
>
> Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

- ✓ **Ատելության հիմքով այլ իրավախախտումներ**

Հետապնդումն՝ իբրև ատելության հիմքով այլ իրավախախտման տեսակ, ԼԳԲՏ անձանց դեմ հաճախ դրսևորվում է վիրտուալ հարթակում՝ ուղեկցվելով սպառնալիքներով, որոնք միտված են ԼԳԲՏ անձանց հանրային գործունեությունը դադարեցնելուն: Բռնություն գործադրողներն այն կարծիքին են, որ իրենց վարքով խոչընդոտում են հայաստանյան հասարակության մեջ «այլասերման» ու ԼԳԲՏ «քարոզի» տարածումը: Հետապնդումներ հաճախ իրականացնում են նաև ԼԳԲՏ անձանց ընտանիքները, ում գործողությունները միտում ունեն փոխելու ԼԳԲՏ մարդկանց «սխալ» սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը: Խորանալով՝ հետապնդումները վերաճում են ԼԳԲՏ անձանց լիակատար վերահսկողության՝ կյանքի ամենատարբեր ոլորտներում:

> **Ասացին, որ կպարզեն, թե ովքեր են ընդգրկված կայքի խմբագրակազմում և կձեռնարկեն կոնկրետ գործողություններ, այդ թվում՝ ֆիզիկական բռնություն: Այդ ամբողջ խոսակցությունն, իհարկե, ուղեկցվում էր հայհոյանքներով:**
>
> Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

ԼԳԲՏ անձանց պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին վնասի պատճառում, որը դրսևորվում է վիրավորանքով, զրպարտությամբ, ատելության խոսքով: Վերջիններիս կիրառումը ակնհայտորեն հիմնավորվում է ԼԳԲՏ անձանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության դրսևորմամբ՝ ցույց տալով նրանց նկատմամբ հասարակության խտրական վերաբերմունքը: Ատելության խոսքի նման արտահայտումներն ուղղված են ԼԳԲՏ անձանց պիտակավորմանը՝ կիրառելով «գալուբոյ», «համասեռամոլ», «արվամոլ», «քուրո», «ապերիկ», «բիգուձի», «ղզողլան», «հիվանդ», «հոգեկան» վիրավորական և խտրական բառերը: ԼԳԲՏ անձինք, հասարակության կողմից ենթարկվելով շարունակական խտրական վերաբերմունքի, ցուցաբերում են խուսափողական դիրքորոշում և վարք իրենց հանդեպ հնչող սպառնալիքների առնչությամբ՝ այդ կերպ զգուշանալով իրենց նկատմամբ կիրառվող ատելության հիմքով գործողություններից:

Հանրային ծառայությունների տրամադրման սահմանափակում կամ մերժում, ինչը նշանակում է, որ ԼԳԲՏ անձինք սպասարկման, առողջապահական, սոցիալական և այլ ոլորտներում ծառայություններից օգտվելիս հաճախ բախվում են ակնհայտ խտրական վերաբերմունքի: Հարցված ԼԳԲՏ անձինք պատմում են, որ սպասարկման ոլորտի տարբեր վայրերում կա ընդունված սկզբունք կամ ղեկավար անձանց կողմից հստակ հրահանգ՝ չսպասարկել ԼԳԲՏ անձանց, ստեղծել միջավայր, որը կստպի նրանց չօգտվել այդ ծառայություններից:

> **Անընդհատ հետաձգում էին սպասարկումը և ուշացնում էին պատվերը: Իրենց հանձնարարված է չսպասարկել ԼԳԲՏ մարդկանց, այսինքն՝ սպասարկել այնպես, որ այլևս չգան:**
>
> Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

Աշխատանքային միջավայրում դրսևորվող անհանդուրժողականություն, որը դրսևորվում է ԼԳԲՏ անձանց աշխատանքից հեռացնելով կամ առհասարակ աշխատանքի չընդունելով՝ կրկին հիմք ընդունելով նրանց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը: Այս համատեքստում անտեսվում է նրանց՝ իբրև մասնագետների կարողություններն ու հմտությունները: ԼԳԲՏ անձանց կարծիքով, անգամ կասկածն

իրենց կողմնորոշման կամ ինքնության վերաբերյալ բացառում է իրենց՝ աշխատանքի ընդունման հավանականությունը:

> **Ընկերուհիս և ես գնացինք հարցազրույցի: Նրան ընդունեցին աշխատանքի, իսկ ինձ՝ ոչ, չնայած այն հանգամանքին, որ իր մասնագիտական տվյալներն ավելի թույլ էին: Հարցազրույցի ընթացքում ես զգացի, որ իրենք նկատել են իմ սեռական կողմնորոշումը: Հարցազրույցից հետո ասացին, որ կզանգահարեն ու չզանգահարեցին:**
>
> Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործությունները և այլլ իրավախախտումները դասակարգելիս կարելի է նկատել, որ դրանք սերտորեն փոխկապված են և բխում են մեկը մյուսից: Այսպես, ատելության հիմքով հանցագործությունների սկզբնական փուլում դրսևորվում են հետապնդումներն ու սպառնալիքները, որոնց հաջորդում են ֆիզիկական բռնությունները՝ ուղեկցվելով և՛ հոգեբանական ճնշումներով, և՛առողջությանը վնասի նպատակաուղղված պատճառ-մամբ: ԼԳԲՏ անձանց նկատմամբ կիրառվող բռնի գործողությունները ինչպես ավելի լայն՝ հասարակական, այնպես էլ ներընտանեկան բնույթ են կրում՝ խոչընդոտելով ԼԳԲՏ անձանց՝ հասարակության մեջ լիարժեք ինքնաիրացմանը:

2.4. Ատելության հիմքով հանցագործությունների նախադրյալները

Ուսումնասիրության տվյալները փաստում են, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրականացվող ատելության հիմքով հանցագործությունների առաջնային նախադրյալներից կամ հիմքերից մեկը նրանց արտաքինն է, որ տարբերում է նրանց և չի արտահայտում հասարակության լայն շերտերի կողմից ընդունված «նորմալության» չափանիշները: Արտաքին տարբերակիչ հատկանիշներից են ԼԳԲՏ անձանց սանրվածքը, հագուստը, շարժուձևը, խոսելաձևը: Այս տեսանկյունից ակնհայտ անհանդուրժողականության են ենթարկվում տրանսգենդեր անձինք: Վերջիններս հեշտորեն տարբերվում և ճանաչելի են դառնում հասարակությունում՝ հոգեբանական և ֆիզիկական ճնշումների ենթարկվելով նախևառաջ ընտանիքի, ընկերների կողմից:[49] Հարցվողներն առանձնացնում են մի քանի արտաքին հատկանիշներ, որոնք հաճախ պատճառ են դառնում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի: Դրանք են՝ ԼԳԲՏ անձանց ձայնը, գունավոր հագուստը, տղամարդկանց մոտ՝ ականջօղերի առկայությունը, սանրվածքը և այլն:

> **Երևի իմ քայլվածքն էր պատճառը կամ էլ ինձ ուղեկցող անձի, որովհետև ինքն ինձնից ավելի ֆեմինին է:**
>
> Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

Համաձայն հարցվողների, ատելության հիմքով հանցագործությունների և այլ իրավախախտումների պատճառներից է նաև ԼԳԲՏ անձանց ակտիվ ներկայությունը վիրտուալ հարթակում: ԼԳԲՏ համայնքի կողմից տարածվող հայտարարությունները, տարբեր միջոցառումների կազմակերպումը կամ դրանց մասնակցությունն, ըստ էության, ԼԳԲՏ մարդկանց դարձնում են ավելի «իրական» խտրական դիրքորոշում ունեցողների համար: Արդյունքում, ԼԳԲՏ անձինք ատելության կոչերի թիրախ են դառնում նաև սոցիալական ցանցերում.ԼԳԲՏ անձանց սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը հաճախ բացահայտվում է՝ ներխուժելով նրանց անձնական տարածք, հանրայնացնելով սոցիալական ցանցերում նրանց նամակագրությունները, ձայնալսելով հեռախոսազրույցները և այլն:

[49] «Տրանսգենդեր անձանց սեռափոխության կարիքները. իրավական խոչընդոտների գնահատում», Երևան, 2013, զեկույցն ամբողջությամբ տե՛ս http://ngngo.net/ կայքում:

ԼԳԲՏ համայնքի կողմից Հայաստանում կազմակերպվող միջոցառումներն իբրև հանրային գործողություն՝ ակներև են դարձնում հայաստանյան հասարակության խտրական դիրքորոշումը ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ: Ըստ էության, սրա հիմնային պատճառներից է ԼԳԲՏ անձանց, նրանց գործունեության, խնդիրների և իրավունքների բարձրաձայնումը և տեսանելիացումը մի հասարակական դրության մեջ, երբ հանրային լայն շերտերը հակված են մերժելու և խտրականացնելու սեռականության ոչ հետերոնորմատիվային դրսևորումները: Ատելության հիմքով գործողությունների ականատեսները, որպես բռնության ոչ անմիջական մասնակիցներ, ևս նշում են, որ ԼԳԲՏ անձանց սեռականության շեշտադրումն առավել հանրային վայրերում ճնշումների և բռնությունների առիթ է:

Տղաները նստած էին երթուղայինի վերջում և ընթացքում շոյում էին իրար, համբուրվում, ու դրանից էլ վարորդը ենթադրել է, որ իրենք ոչ նորմալ երևույթի ականատես են: Բարկացել են ու տղաներին հանել մեքենայից:

Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

Այս պարագայում հարց է առաջանում.արդյո՞ք հետերոսեքսուալ մարդկանց զգացմունքային հարաբերությունների կամ սեռականության արտահայտումները հանրային միջավայրերում ևս կդառնար ագրեսիվ և բռնի գործողությունների թիրախ:

ԼԳԲՏ անձանց հանդեպ գործադրվող բռնությունների քննադատությունը, նրանց իրավունքների պաշտպանությունը հաճախ խոցելի են դարձնում նաև ԼԳԲՏ անձանց շահերի պաշտպաններին՝ թիրախավորելով նրանց:

Ընտանիքի անդամների կողմից ճնշումների և բռնությունների հիմքում ընկած է նրանց ցանկությունը փոխել ԼԳԲՏ անձանց սեռական կողմնորոշումը կամ գենդերային՝ համընդհանուր հետերոնորմատիվային համոզմունքներին համապատասխան:

... ինձ հարցրեց՝ արդյոք գե՞յ եմ, ես ասացի՝ ոչ: Դրանից հետո ինձ ասաց, որ եթե իմանա, որ այդպիսին եմ, ինձ կծեծի ու «իր ձևերով» կդարձնի ինձ հետերոսեքսուալ, քանի որ գեյ լինելը «նորմալ» չէ:

Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրականացվող բռնությունները, ֆիզիկական և հոգեբանական ճնշումները, սպառնալիքներն ու ահաբեկումները Հայաստանում, ըստ էության, կրում են շարունակական բնույթ: Այս հանցագործ շղթայում ներգրավված են մի շարք ինստիտուտներ՝ ԼԳԲՏ անձանց ընտանիքները, իրավապահ համակարգը, սոցիալական, առողջապահական և կրթական հաստատությունները, հանրային ոլորտի մի շարք հաստատություններ և այլն: Հատկապես արտաքին նշանները, որոնք բացահայտ են դարձնում ԼԳԲՏ անձանց սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը: ԼԳԲՏ անձանց վարքը, ինչպես նաև հանրային վայրերում սեռականության ցուցադրումը, համարվում են համոզիչ պատճառ նրանց նկատմամբ կիրառվող բռնությունները արդարացնելու կամ էլ բռնություններին չմիջամտելու համար: ԼԳԲՏ համայնքի ներսում ինքնին առկա է զոհին մեղադրելու երևույթն ու միտումը: ԼԳԲՏ անձանց նկատմամբ կիրառվող բռնությունները և նրանց իրավունքների ոտնահարումը հաճախ արդարացվում է այդ գործողությունների՝ ԼԳԲՏ ակտիվիստների կողմից, ովքեր ևս ատելության հիմքով հանցագործությունների պոտենցիալ թիրախ են:

2.5. Ատելության հիմքով հանցագործություններ և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումներ իրականացնողների բնութագրիչները

Ատելության խոսքի տարածման դեմ օրենքի բացակայությունն[50], ըստ էության, խորացնում և ընդլայնում է դրա տարածումն ամենատարբեր հարթակներում և ոլորտներում: ԶԼՄ-ն առաջին հերթին դառնում են ատելության խոսքի տարածողներ, իսկ պետությունը որևէ քայլ չի ձեռնարկում ԼԳԲՏ անձանց նկատմամբ բացասական դիրքորոշումը նվազեցնելու ուղղությամբ[51]: ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրականացվող ատելության հիմքով հանցագործությունները ոչ միայն չեն պատժվում օրենքի ողջ խստությամբ, այլև ԶԼՄ-ի և պաշտոնական հռետորաբանությունը տարածող այլ ակտորների միջոցով շարունակաբար սնուցվում է «ճիշտ», «բնական» կամ «ավանդական» սեռականության վերաբերյալ գիտելիքն ու տեղեկատվությունը: Այս համատեքստում հանրությունը այլընտրանքային գիտելիքի ձեռքբերման, «ուրիշ»-ի ճանաչման և նրա հետ հարաբերման քիչ հնարավորություններ ունի:

«Ավանդական» սեռականության շրջանակներից դուրս լինելը պիտակավորում է ԼԳԲՏ անձանց, դարձնում է նրանց անհանդուրժողականության և բռնության թիրախ: Հարցված ԼԳԲՏ անձինք իրենց նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերողներին նկարագրում են իբրև «ավանդական» արժեքներով առաջնորդվող, սեփական «ճիշտ» ինքնությունը լրացուցիչ շեշտադրելու անհրաժեշտություն ունեցող մարդկանց, ովքեր բռնության և ճնշումների միջոցով, փորձում են շեշտադրել իրենց հանրային նշանակալի դերը:

> **Հիմնականում դրանք «քյառթուներն» են: Բայց ասեմ, որ նրանց մեջ էլ կան շատ նույնասեռականներ կամ բիսեքսուալներ:**
>
> Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

[50]«Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն», ՓԻՆՔ Արմենիա, Երևան, 2016, էջ 21

[51] Տե՛ս նույն տեղում

Հարցված ԼԳԲՏ անձինք իրավախախտներին նկարագրում են ըստ մի քանի բնութագրիչների, որոնց համախմբմամբ, կարող ենք ուրվագծել բռնարարների հետևյալ խմբերը:

- **Երիտասարդներ,** հատկապես 16-19 տարիքային խմբին պատկանող, որոնց համար ԼԳԲՏ անձանց հանդեպ կիրառվող ատելության հիմքով գործողությունները սեփական «ես»-ը շեշտադրելու, հասակակիցների կամ իրենց համար նշանակալի խմբերում ավելի դրական կերպար ստանալու ու պահպանելու նպատակ ունեն:

- **Քրիստոնեական համոզմունքներով առաջնորդվող անձինք***.* Քրիստոնեությունն առհասարակ և եկեղեցին՝ իբրև կրոնական ինստիտուտ մասնավորաբար, կարևոր դեր են ունեցել սեռականության շուրջ դիսկուրսների և դիրքորոշումների ձևավորման հարցում բոլոր ժամանակներում: Կրոնականությունից աշխարհիկության անցումը նշանավորվեց նաև սեռականության, մարմնի, գենդերային տարբերությունների վերաբերյալ նոր գիտելիքի և պատկերացումների ձևավորմամբ[52], որտեղ, ի հակադրություն եկեղեցու, հեգեմոն դիրքում հայտնվեցին արդեն աշխարհիկ իշխանությունները: Հայաստանում, այնուամենայնիվ, եկեղեցին՝ շաղախված ավանդականության գաղափարներով, շարունակաբար մեծ դեր և ներգրավվածություն է ունեցել և ունի աշխարհիկ ոլորտի ինստիտուտների գործունեության մեջ՝ ներառյալ կրթությունը, մեդիան, ընտանիքը, և այլն: Հայ առաքելական եկեղեցին ընդգծված բացասական դիրքորոշում ունի ոչ հետերոնորմատիվային սեռականությանը[53], ինչը հաջողությամբ քարոզվում և վերարտադրվում է վերոնշյալ ինստիտուցիոնալ ռեսուրսներով: ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական և բռնի գործողություններ իրականացնող մարդիկ և հանրային խմբերն իրենք, լինելով խտրականության քարոզչության թիրախ, շարունակաբար վերարտադրում են եկեղեցական դոգմատիկ կաղապարները ավանդական ընտանիքի և ամուսնության, տղամարդու և կնոջ սեռադերային «բնական» հարաբերությունների մասին՝ հիմնավորելով իրենց վարքն ու դիրքորոշումը նրանով, որ ոչ հետերոնորմատիվային սեռականություն ունեցող

[52] Wiesner-Hanks M., “Christianity and Sexuality in the Early Modern World: Regulating Desire, Reforming Practice”, էջ 2

[53] «Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն», ՓԻՆՔ Արմենիա, Երևան, 2016, էջ 13

մարդիկ հակասում են Աստծո կողմից հաստատված «բնական» կարգին, խախտում են մարդկության վերարտադրության շղթան:

- **Պետական, հասարակական ինստիտուտների ներկայացուցիչներ,** ինչպես օրինակ, կուսակցականներ, հատկապես՝ ազգայնական (օրինակ, «Հայազն»), ինչպես նաև ազգայնական հասարակական խմբավորումներ (օրինակ, «Մեկ ազգ» կազմակերպությունների դաշինքը) և այլն: Իշխող ՀՀԿ խմբակցության պատգամավոր Հայկ Բաբուխանյանը տարբեր հարթակներում նշել է, որ չի հանդուրժում «համասեռամոլությունը» և խրախուսում է հատուկ գործողություն-ների կիրառությունը, որը կսահմանափակի նույնասեռականության տարածմանը[54]: Հ. Բաբուխանյանը հանդես է եկել նաև հայտարարությամբ, որ անհրաժեշտ է սահմանափակել այն հասարակական կազմակերպությունների գործունեությունը, որոնք աշխատում են ԼԳԲՏ անձանց շահերի պաշտպանության և գենդերային հավասարության խրախուսման ոլորտում: Ըստ էության, այս խմբերի գործունեու-թյունն ուղղակիորեն միտված է ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելության խոսքի և դրա հիմքով գործողությունների իրականացմանը, և նրանց և մի շարք պետական պաշտոնյաների խտրական դիրքորոշումն ու վարքը արձագանքում են միմյանց՝ խորացնելով անպատժելիության դրությունը:

[54]Տե՛ս http://www.pinkarmenia.org/tag/%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84-%D5%A9%D5%A5%D6%80%D5%A9/

2.6. Ատելության հիմքով հանցագործությունների և ատելությամբ պայմանավորված այլ իրավախախտումների իրականացման միջավայրերը

2015թ.-ին Իլգա-Եվրոպայի կողմից իրականացրած հետազոտության արդյունքում առանձնացվել են ոլորտներ, որտեղ ԼԳԲՏ անձինք ավելի հաճախ են ենթարկվում ոտնձգությունների և բռնության: Տվյալները ցույց են տալիս, որ ԼԳԲՏ անձինք ամենից շատ բռնության ենթարկվել են փողոցում՝ 40%, 23%-ը տուժել է համասարաններում, 21%-ը՝ դպրոցում, 21%-ը՝ երիտասարդական ակումբներում, 17%-ը՝ փաբերում և այլ ժամանցի վայրերում, 15%-ը՝ խանութներում, 13%-ը՝ տանը, հանգստի/սպորտի համար նախատեսված վայրերում: Ինստիտուցիոնալ մակարդակում ԼԳԲՏ անձանց 8%-ը բռնության ենթարկվել են աշխատավայրում, 6%-ը՝ առողջապահական հաստատություններում, 4,5%-ը՝ եկեղեցիներում, իսկ 23%-ը ահաբեկվել է համացանցում՝ էլեկտրոնային նամակների և տեքստային հաղորդագրությունների միջոցով[55]:
Ի հավելումն սրա, տվյալ հետազոտությունը թույլ է տալիս առավել մանրամասն նկարագրել Հայաստանում ԼԳԲՏ անձանց հանդեպ իրականացվող հանցագործությունների միջավայրային գործոնները:

Հանրային վայրեր, մեր փաստագրած դեպքերում եղեն են բոլոր նշված վայրերը՝ այգիներ, փողոցներ, ակումբներ, հանրային տրանսպորտ: Հանրային վայրերում տեղի ունեցող բռնությունները նպատակ ունեն բռնության դեպքը դարձնելու ավելի զանգվածային և ստանալու հանրային խրախուսող արձագանք: Հանցագործություն իրականացնողները հանրային վայրերը հաճախ ընդունում են որպես «սեփական տարածք»՝ թույլ չտալով ու չհանդուրժելով այնտեղ ԼԳԲՏ անձանց ներկայությունը:

> **Նրա ասելով՝ ես իր քաղաքը՝ Երևանը, կեղտոտում եմ իմ հագ ու կապով, զարդարանքի պարագաներով, սանրվածքի ձևով: Նա ինձ ասաց, որ մեր նմաններին պետք է վառել, մենք մարդ չենք:**
>
> Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

[55] «Նախապաշարումներից հավասարություն. Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրություն», ՓԻՆՔ Արմենիա, Երևան, 2016, էջ 20

Տարածքներ, որոնք պայմանականորեն նախատեսված են ԼԳԲՏ անձանց համար

Սա առավելապես վերաբերում է սեքս-աշխատանքով զբաղվող տրանսգենդեր անձան, ում գործատուները հրաժարվում են ընդունել աշխատանքի՝ հիմք համարելով վերջիններիս գենդերային ինքնությունը Ատելության հիմքով հանցագործությունների դեպքերը մասնավորապես գրանցվել են Անգլիական այգում, որն առավել հայտնի է որպես Կոմայգի:

ԼԳԲՏ անձանց տներ, որտեղ բռնության, ճնշման և ահաբեկման գործողությունները իրականացվում են նրանց ընտանիքների անդամների կողմից: Բնակարանը մի առումով իրականացնում է նաև ընտանիքի՝ ԼԳԲՏ անդամի ինքնությունը շրջապատից թաքցնելու գործառույթ:

Կրթական հաստատություններ և բանակ

Կրթական հաստատությունների շարքում հարցվածները հատկապես առաձնացնում են ԵՊՀ-ը, հանրակրթական դպրոցները, Եվրոպական քոլեջը, մի շարք ուսումնարաններ, որտեղ ենթարկվել են ատելության հիմքով հանցագործությունների, ճնշումների: Բանակում ևս հաճախակի են բռնությունները և ճնշումները ԼԳԲՏ անձանց նկատմամբ:

Համացանցն իբրև վիրտուալ հարթակ ևս ատելության հիմքով գործողությունների իրականացման միջավայր է, որտեղ հատկապես խոցելի են ԼԳԲՏ անձանց անձնական հաշիվները (account): Վիրտուալ հարթակում ԼԳԲՏ անձինք ենթարկվում են հետապնդման և սպառնալիքի նամակների, հայտարարությունների, տեքստերի, ծաղրական նկարների պատրաստման միջոցով:

Աշխատավայրում ԼԳԲՏ անձանց ինքնության կամ սեռական կողմնորոշման բացահայտումը դարձնում է նրանց կրկնակի խոցելի՝ իբրև մասնագետ և իբրև ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչ: Ատելության զոհ դարձած հարցվածները նշում են բռնության դեպքերի մասին, որոնք տեղի են ունեցել «Երևան Մոլ»-ում, տարբեր վարսավիրանոցներում, սպասարկման ոլորտի այլ վայրերում:

2.7. Պետական մարմինների դերը ատելության հիմքով հանցագործությունների բացահայտման գործընթացում

Ինչպես արդեն նշվել է, անկախ Հայաստանի Հանրապետության կողմից ԼԳԲՏ անձանց իրավունքները պաշտպանող տարբեր տեղական և միջազգային իրավական փաստաթղթերի, պարտավորությունների ընդունումից, ատելության հիմքով հանցագործությունները շատ հաճախ չեն պատժվում: Ինչպես ատելության հիմքով հանցագործության զոհերն ու ականատեսներն են նշում, հիմնականում նման հանցագործությունները անպատիժ են մնում պայմանավորված հանցագործների ինքնությունը չբացահայտելու, հասարակական համբավը չփչացնելու, դեպքերին հասարակական արձագանք չտալու պատճառով:

> **Նա շատ բարձր պաշտոնավորներից մեկի տղան էր, ու ես վախեցած էի, որովհետև ինչ ուզեր՝ կարող էր անել:**
>
> Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

ԼԳԲՏ անձինք, մի շարք պատճառներից ելնելով, խուսափում են իրենց հանդեպ կիրառվող հանցագործության, բռնության, խտրականության դեպքերի առթիվ դիմել իրավապահ մարմիններին: Հարցված ԼԳԲՏ անձինք նշում են, որ ատելության հիմքով հանցագործությունների բացահայտումն ու հանցագործների պատժումը ենթադրում է նաև իրենց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հանրայնացում, ինչն իրենք հիմնականում թաքցնում են հատկապես ընտանիքից և անմիջական շրջապատից՝ մտավախություն ունենալով, որ դա կբերի կոնֆլիկտների և սոցիալական օտարման:

> **Ոչ մի տեղ չեմ դիմել, քանի որ վախենում էի, որ այդ ամենի մասին կիմանան իմ ծնողները, իսկ իմ ամբողջ նպատակն իրենց ցավ չպատճառելն էր:**
>
> Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

Խնդրի հանրայնացումից զատ, եթե դեպքը ԼԳԲՏ անձի համար առանցքային նշանակություն ունեցող սոցիալական խմբում է տեղի ունեցել՝ օրինակ ընտանիք,

համակուրսեցիների խումբ, շատ դեպքերում էմոցիոնալ գործոնն է նրանց հետ պահում իրավախախտներին պատժելու համար ինստիտուցիոնալ մարմիններին դիմելուց:

> **Ես մտածում էի, որ պետք է իրենց վրայով անցնեի, բայց, իրականում, բոլորին էլ սիրում էի, ու չէի ուզում, որ իրենք այդ ամենի մեջ լինեն: Մի քիչ էլ վախեցա, որ մասշտաբները կմեծանան, լուրերը կտարածվեն:**
>
> Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

Ինչպես արդեն նշվել է, հետազոտությանը մասնակցել են 16 տարեկանից բարձր ԼԳԲՏ անձինք, սակայն հանցագործությունների դեպքերը ներառում են 2011թ.-ի ապրիլից մինչև 2016թ.-ի ապրիլն ընկած ժամանակահատվածը: Սա նշանակում է, որ հարցվածների հետ տեղի ունեցած բռնության դեպքերը կարող էին տեղի ունեցած լինել դեռևս իրենց անչափահաս տարիքում: Սա ևս նշանակալի գործոն է, որը խոչընդոտում է ԼԳԲՏ անձանց դիմելու իրավապահ մարմինների, մասնավորապես՝ ոստիկանության միջամտությանն ու օգնությանը:

Կիսելով իրենց փորձառությունը՝ հանցագործությունների զոհ և ականատես ԼԳԲՏ անձինք պատմում են, որ հանցագործության դեպքերի բացահայտման գործում իրավապահ մարմինների ներգրավումն անարդյունավետ է. ոստիկանությունը հիմնականում ձգձգում է հաղորդված դեպքերին ընթացք տալու գործընթացը՝ ստիպելով ԼԳԲՏ անձանց ներառվել փաստաթղթային քաշքշուկների մեջ: Այս համատեքստում, ԼԳԲՏ անձինք նախընտրում են խուսափել խնդրի իրավական լուծման ճանապարհից, փորձում են ինքնուրույն լուծել այն:

> **Բավական երկար են տևում իմաստ չունեցող քաշքշուկները, որոնց չի հետևում որևէ արդյունք: Այսքան ժամանակ ցանկացած դիմում ոստիկանությանը անարդյունք է եղել:**
>
> Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

Զանգեցի ոստիկանություն, ասացի, թե ինչ է եղել: Խնդրեցի, որ մեքենա ուղարկեն: Մոտ քսան րոպե մեքենային էի սպասում: Այդ ընթացքում ոստիկանությունից տարբեր մարդիկ զանգեցին, ու բոլորին հերթով պատմում էի՝ ինչ է եղել: Հետո զանգեցին, ասացին, որ մեքենան տեղում է, սակայն ես չէի տեսնում մեքենան և խնդրեցի, որ գան մուտքի մոտ: Նրանք եկան, ես դուրս եկա: Հարցրին, թե ինչ եմ ուզում: Ասացի, որ որևէ բողոք չունեմ, միակ խնդիրս այն է, որ ինձ փողոց ճանապարհեն, որ տաքսի նստեմ ու գնամ տուն: Արձանագրություն կազմեցին, ես ստորագրեցի:

Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

Եթե լուրջ բան լինի, ես ոչ թե կդիմեմ համապատասխան մարմինների, այլ ինքս կձեռնարկեմ այնպիսի քայլեր, որ իրենք [հանցագործները] կյանքում չմոռանան:

Հատված անհատական հարցազրույցից, ԼԳԲՏ անձ

Ըստ էության, իրավապահ մարմինները ոչ թե միտված են իրավախախտների բացահայտմանն ու նրանց նկատմամբ պատժիչ մեխանիզմների կիրառմանը, այլ հանդես են գալիս ատելության հիմքով հանցագործությունների քողարկման և չբարձրաձայնման դիրքից՝ հաշվի առնելով այն կարևոր հանգամանքը, որ հաճախ հենց իրավապահ մարմինների կամ այլ պետական կառույցների ներկայացուցիչներն են իրավախախտները:

2.8. Ամփոփում

Ամփոփելով *«ՍԿԳԻ հանդեպ ատելության հիմքով հանցագործություններ. փաստերի հավաքագրում»* թեմայով հետազոտության արդյունքները՝ կարող ենք խոսել ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործությունների ընդհանուր վիճակագրական նկարագրի, ԼԳԲՏ անձանց նկատմամբ հանրային խտրականության և անհանդուրժողականության դրսևորման, դրանց պատճառների, հանցագործությունների իրավական բացահայտման և պատժիչ մեխանիզմների կիրառման խոչընդոտների մասին:

Տվյալ հետազոտության շրջանակներում դիտարկած ատելության հիմքով հանցագործությունների 198 դեպքի զգալի մասը դրսևորվել է 2015թ.-ին՝ կազմելով 50%, իսկ 2016թ.-ին՝ 16,4%: Հետազոտության շրջանակներում դիտարկած ատելության հիմքով բռնության դեպքերի 79,7%-ը ներկայացրել են զոհերն իրենք, իսկ 20.3%-ը՝ բռնության ականատեսները:

ԼԳԲՏ անձանց հանդեպ ատելության հիմքով հանցագործությունները տիպաբանելիս կարելի է նկատել, որ դրանք սերտորեն փոխկապված են: Այսպես, ատելության հիմքով հանցագործությունների սկզբնական փուլում դրսևորվում են հետապնդումներն ու սպառնալիքները, որոնց հաջորդում են ֆիզիկական բռնության դրսևորումները՝ ուղեկցվելով հատկապես հոգեբանական ճնշումներով: ԼԳԲՏ անձանց նկատմամբ կիրառվող բռնության գործողությունները ինչպես ավելի լայն՝ հասարակական, այնպես էլ ներընտանեկան բնույթ են կրում՝ խոչընդոտելով ԼԳԲՏ անձանց՝ հասարակության մեջ լիարժեք ինքնահիրացմանը:

Իբրև հոգեբանական բռնության կիրառման միջավայր, հաճախ հանդես են գալիս ինստիտուցիոնալ կառույցները՝ բանակ, դպրոց, ԲՈՒՀ-եր, հիվանդանոցներ և այլն: ԼԳԲՏ անձանց հանդեպ կիրառվում են մեկուսացնող, օտարող մեխանիզմներ՝ պիտակավորելով նրանց, չեզոքացնելով շփումը համայնքի այլ անդամների հետ, ինչպես նաև այլ սոցիալական խմբերի հետ:

Ուսումնասիրության տվյալները փաստում են, որ ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրականացվող ատելության հիմքով հանցագործությունների առաջնային նախադրյալներից կամ հիմքերից մեկը նրանց արտաքինն է, որ տարբերում է նրանց և չի արտահայտում հասարակության լայն շերտերի կողմից ընդունված «նորմալության» ու «բնականության» չափանիշները:

ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրականացվող բռնությունները, ֆիզիկական և հոգեբանական ճնշումները, սպառնալիքներն ու ահաբեկումները Հայաստանում, ըստ էության, կրում են շարունակական բնույթ: Այս հանցագործ շղթայում ներգրավված են մի շարք ինստիտուտներ՝ ԼԳԲՏ անձանց ընտանիքները, պետական սեկտորը, մասնավորապես՝ իրավապահ համակարգը, առողջապահական և կրթական հաստատությունները, սոցիալական ծառայությունների ոլորտները և այլն:

Իրավապահ մարմինները Հայաստանում ոչ միայն միտված չեն իրավախախտների բացահայտմանն ու նրանց նկատմամբ պատժիչ մեխանիզմների կիրառմանը, այլև հանդես են գալիս ատելության հիմքով հանցագործությունների քողարկման և չբարձրաձայնման դիրքից: Կարևոր է նշել, որ հաճախ հենց իրավապահ մարմինների կամ այլ պետական կառույցների ներկայացուցիչներն են իրավախախտները:

Իրավապահ մարմինների հանդեպ համընդհանուր անվստահության պայմաններում՝ ԼԳԲՏ անձինք ամեն կերպ խուսափում են նրանց հետ հարաբերվելուց և ապավինում են պատժի սեփական մեթոդներին և մեխանիզմներին:

Այս համատեքստում ատելության հիմքով հանցագործությունները ոչ միայն չեն պատժվում, այլև չի կանխվում դրանց հետագա շարունակականությունը:

Ատելության հիմքով հանցագործությունների կանխմանը, քննությանը և պատասխանատվության նախատեսմանն ուղղված առաջարկություններ

Սույն հետազոտության իրականացումը, փաստորեն բացահայտեց իրավական և սոցիակալան մի շարք խնդիրներ, որոնց դեմ արդյունավետ պայքարը ենթադրում է որոշակի համալիր միջոցների իրականացում օրենսդիր, գործադիր և դատական մարմինների կողմից:

ԼԳԲՏ անձանց դեմ ատելության հիմքով հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարի, ԼԳԲՏ մարդու իրավունքների ապահովման համար անհրաժեշտ է՝

- Մշակել և իրականացնել խտրականության դեմ պայքարի ընդհանուր, միասնական քաղաքականություն, որը, ի թիվս այլնի, կնախատեսի նաև ատելության հիմքով հանցագործությունների և ատելությամբ պայմանավորված այլ արարքների դեմ արդյունավետ պայքարի մեխանիզմներ, ներառյալ նման դեպքերի նախականխման, կանխման, պատշաճ քննության, պատասխանատվության և իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ.
- Վերանայել ատելության հիմքով հանցագործություններն արգելող ՀՀ օրենսդրությունը՝ այն համապատասխանեցնելով միջազգային իրավական չափանիշներին՝ ի ապահովումն նաև ՀՀ ստանձնաց միջազգային պարտավորությունների.
- Սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ պայմանավորված շարժառիթի առկայությունը սահմանել որպես կատարված քրեական արարքի պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ.
- Մշակել և կիրառել մեխանիզմներ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունների ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննության ապահովման համար, ներառյալ հանցագործության շարժառիթի բացահայտմանն ուղղված համապատասխան իրավական և ընթացակարգային մեխանիզմների մշակումը.
- Ապահովել արդարադատության մատչելիությունը ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց համար, մասնավորապես նախատեսելով անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ

մեխանիզմներ, որոնք կբացառեն անձի կրկնազորհացման վտանգը, կապահովեն անձի անվտանգությունը և կնախատեսեն վնասների հատուցման համընդգրկուն մեխանիզմներ.

- Խրախուսել ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց, ինչպես նաև ականատեսներին հաղորդել կատարված հանցագործությունների վերաբերյալ տվյալներ.
- Փաստագրել և վարել ՀՀ-ում ատելության հիմքով հանցագործությունների, ներառյալ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունների վիճակագրություն՝ տեսանելի դարձնելով ատելության հիմքով հանցագործությունների խնդիրը ՀՀ-ում.
- Վերանայել ատելության խոսքն արգելող ՀՀ օրենսդրությունը, սահմանել ատելության խոսք հասկացությունը, սահմանել պատասխանատվություն որոշակի հատկանիշներ ունեցող անձանց, ներառյալ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքի համար.
- Ընդունել խտրականությունը կանխարգելող, ինչպես նաև քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվություն նախատեսող առանձին համապարփակ օրենսդրություն, որը կապահովի խտրականությունից պաշտպանված լինելու անձի իրավունքը նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները հասարակության մեջ, մասնավորապես հրապարակայնորեն հանդես գալ հանդուրժողականություն սերմանող հայտարարություններով՝ ճանաչելով ԼԳԲՏ անձանց հասարակության լիիրավ անդամներ և քաղաքացիներ լինելու փաստը:

Հապավումների ցանկ

ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԼԳԲՏ	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՍԿԳԻ	Սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն
ԺՀՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ՄԻՀՀ	Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
ՔՔԻՄԴ	Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր
ՄԻԿ	ՄԱԿ–ի Մարդու իրավունքների կոմիտե
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա
ՏՍՄԻԿ	ՄԱԿ–ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե

Հիմնական հասկացություններ

Անձ – ֆիզիկական անձ, իրավաբանական անձ՝ այնքանով, որքանով սույն օրենքով սահմանված իրավունքները և ազատությունները կիրառելի են իրավաբանական անձի նկատմամբ.

Ատելության հիմքով հանցագործություն – քրեորեն պատժելի արարք, որը կատարվել է որոշակի ատելությամբ կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված շարժառիթով:

Ատելության խոսք – ցանկացած արտահայտություն, որը տարածում, դրդում, խրախուսում կամ արդարացնում է ռասայական ատելությունը, քսենոֆոբիան, հակասեմիտիզմը կամ ատելության այլ ձևերը՝ հիմնված անհանդուրժողականության վրա, ներառյալ անհանդուրժողականությունը՝ արտահայտված ագրեսիվ ազգայնականությամբ և էթնոցենտրիզմով, խտրականությամբ և փոքրամասնությունների, միգրանտների և միգրանտային ծագում ունեցող անձանց նկատմամբ բռնություններով

Բիսեքսուալ – մարդ, որը ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հակում ունի և՛ նույն, և՛ հակառակ սեռի անձանց նկատմամբ:

Գեյ – (նույնասեռական տղամարդ) տղամարդ, որը ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հակումներ ունի այլ տղամարդու նկատմամբ:

Գենդեր – վերաբերում է մարդկանց առնականության և կանացիության ներքին ընկալմանը և փորձին, նաև հասարակական կառուցվածքին, որտեղ սահմանվում են որոշակի վարքագծեր տղամարդկանց և կանանց դերերի համար՝ կախված պատմությունից, հասարակություններից, մշակույթներից և դասակարգերից: Գենդերը կապված է հասարակության ակնկալիքների հետ և լոկ կենսաբանական հարց չէ:

Գենդերային ինքնություն – վերաբերում է յուրաքանչյուր անձի կողմից իր գենդերի ներքին ընկալմանը և անհատական փորձին, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ տրված սեռին՝ ներառյալ սեփական մարմնի ընկալումը և գենդերային այլ արտահայտումները՝ հագուստը, խոսքը և պահելաձևը:

Ինտերսեքս – մարդ, որը կենսաբանորեն ունի և՛ արական, և՛ իգական սեռերին բնորոշ կենսաբանական առանձնահատկություններ՝ ինչպես քրոմոսոմային կամ հորմոնալ, այնպես էլ սեռական օրգանների ձևով, ինչի արդյունքում չի կարողանում իրեն լիարժեքորեն նույնականացնել ոչ տղամարդու, ոչ էլ կնոջ հետ:

ԼԳԲՏ համայնք – լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր անձանց համայնք, որը միավորված է ընդհանուր հետաքրքրություններով, խնդիրներով և նպատակներով. այն իր հերթին բաղկացած է տարբեր ենթահամայնքներից, խմբերից և հանրույթներից:

Լեսբի – (նույնասեռական կին) կին, որը ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հակումներ ունի այլ կնոջ նկատմամբ:

Խտրականություն – անձի իրավունքների և ազատությունների ցանկացած հիմքով տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն՝ առանց օբյեկտիվ հիմքերի և հետապնդվող իրավաչափ նպատակի ու ընտրված միջոցների միջև ողջամիտ համաչափության, որն ունի անձի իրավունքների և հիմնարար ազատությունների՝ հավասար հիմունքներով ճանաչումը, իրականացումը կամ դրանցից օգտվելը ոտնահարելու կամ սահմանափակելու նպատակ կամ ազդեցություն:

Հետերոսեքսուալ – մարդ, որը ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հակումներ ունի հակառակ սեռի ներկայացուցչի նկատմամբ: Հոմոսեքսուալ (լեսբի կամ գեյ) – մարդ, որը ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հակումներ ունի նույն սեռի ներկայացուցչի նկատմամբ:

Հոմոֆոբիա – երկյուղ, վախ, ատելություն ու զզվանք նույնասեռական կամ որպես նույնասեռական ընկալվող մարդկանց և նույնասեռականության նկատմամբ: Սեռական կողմնորոշում – անհատի ռոմանտիկ, զգացմունքային, էրոտիկ և սեռական հրապուրանքը նույն կամ հակառակ սեռի անձի հանդեպ:

Պաշտպանված հատկանիշ – անձի կամ անձանց խմբի ընդհանուր հատկանիշ՝ ըստ սեռի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների:

Սեռականություն – յուրաքանչյուր անձի կենսաբանական, մտավոր, վարքագծային և սոցիալական բնութագրիչների ամբողջությունը, որը սահմանում է մարդու ինքնությունը, վարքագիծը, կերպարն ու դերը որպես անհատ և որպես հասարակության անդամ:

Վիկտիմիզացիա – անձի համար բացասական հետևանքներ ունեցող վերաբերմունք, որը հետևանք է անձի կողմից իր իրավունքների պաշտպանության նպատակով գանգատ ներկայացնելուն, սույն օրենքի կիրառման նպատակով դատական գործ սկսելուն կամ մեկ այլ անձի գանգատի կամ դատական գործի վերաբերյալ տեղեկատվություն՝ ներառյալ վկայություն տրամադրելուն:

Տրանսգենդեր – ընդհանրական տերմին, որն օգտագործվում է այն մարդկանց համար, որոնց գենդերային ինքնությունը, արտահայտումը և վարքագիծը տարբերվում են նրանց կենսաբանական սեռի բնութագրական հատկանիշներից:

Տրանսգենդեր կին – արական սեռով ծնված մարդ, որն իրեն համարում է կին:

Տրանսգենդեր տղամարդ – իգական սեռով ծնված մարդ, որն իրեն համարում է տղամարդ:

Տրանսֆոբիա – երկյուղ, վախ, ատելություն ու զզվանք տրանսգենդեր անձանց նկատմամբ:

Զեկույցը հրապարակվել է Հանրային տեղեկատվություն
և գիտելիքի կարիք հասարակական կազմակերպության
կողմից ԻԼԳԱ-Եվրոպայի ֆինանսական աջակցությամբ

www.pinkarmenia.org

Երևան, 2016թ.
Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ